«Հայաստանում նպատակային բնապահպանական պետական սուբվենցիաների արդյունավետության մասնակցային գնահատում»

Ազդակիր համայնքներում բնապահպանական սուբվենցիաներով իրականացված նախագծերի վերաբերյալ հարցումների արդյունքների վերլուծություն

Սույն փաստաթուղթը ստեղծվել է Եվրոպական Միության աջակցությամբ՝ «Հզորացման գործընկերներ» ծրագրի շրջանակներում: Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատվությունը ամբողջությամբ կրում է «Խազեր» էկոլոգամշակութային հասարակական կազմակերպությունը, որը ներգրավված է «Հզորացման գործընկերներ» ծրագրում, և ոչ մի դեպքում չի կարող համարվել, որ այն արտացոլում է Եվրոպական Միության տեսակետը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի գաղափարի հիմքում 2004-2017 թթ. -ին հարկային եկամուտների մասը կազմող բնապահպանական վճարներից մասհանումների՝ նպատակային բնապահպանական սուբվենցիաների հաշվին, ազդակիր համայնքներում, բացառությամբ Երևան քաղաքի, իրականացված բնապահպանական միջոցառումների արդյունավետության մասնակցային գնահատման անհրաժեշտությունն է՝ պարզելու համար թե որքանով են դրանք համահունչ տեղի բնակչության կարիքներին և պահանջմունքներին: Գնահատման գործընթացում տեղական քաղհասարակության կառույցների և բնակչության մասնակցությունը միտված էր խթանելու ազգային և տեղական բյուջեների թափանցիկությանը, իսկ սուբվենցիաների տրամադրման գործող մեխանիզմի որակի և արդյունավետության վերաբերյալ դիտողություններն ու առաջարկությունները հիմք են ծառայել դրա վերանայման, կատարելագործման և/կամ այլընտրանքային մեխանիզմով փոխարինման վերաբերյալ առաջարկներով հանդես գալու համար:

Պետական բնապահպանական սուբվենցիաների հաշվին 2004–2017 թթ.-ին իրականացված միջոցառումների արդյունավետության մասնակցային գնահատումը կատարվել է 30 ազդակիր համայնքներում հատուկ մշակված հարցաշարի միջոցով իրականացված հարցման արդյունքների հիման վրա: Հարցաշարը կազմվել էր այնպես, որպեսզի հնարավոր լիներ բացահայտել տեղի բնակչության կարծիքը իրենց տարածքում առկա բնապահպանական խնդիրների, դրանց լուծման համար ձեռնարկված միջոցառումների և ստացված արդյունքների վերաբերյալ, դրանցով բավարարված լինելու չափի մասին և իրականացված ծրագրերի մշակմանը և/կամ իրականացմանը իրենց մասնակցության մասին:

Հարցման արդյունքում ստացված պատկերը 2004–2017 թթ.-ին ազդակիր համայնքներում իրականացված բնապահպանական ծրագրերի հետ համադրելու նպատակով կազմվել է ամփոփ տեղեկանք (Հավելված 1), որում ներառված են նշված ժամանակահատվածում յուրաքանչյուր ազդակիր համայնքում իրականացված ծրագրերն ու դրանց համար պետբյուջեից մասհանումները:

Առաջին իսկ հայացքից դժվար չէ նկատել, որ ծրագրերի մեծ մասը ամենևին էլ բնապահպանական բնույթ չեն կրել: Բնապահպանական սուբվենցիաների ոչ նպատակային օգտագործման վառ օրինակներից են.

- աղբահավաք կամ փոշեհավաք մեքենայի ձեռքբերում, աղբարկղերի ձեռքբերում և տեղադրում,
- աղբահանության կազմակերպում, կենցաղային թափոնների աղբավայրի հենապատերի նորոգում,
- հանրային զուգարանի կառուցում,
- շենքերի տանիքների հակակորոզիոն ներկով պատման աշխատանքներ,
- խաղահրապարակների, զբոսայգիների և մարզահրապարակների կառուցում և ցանկապատում,

- փողոցների ասֆալտապատում,
- մանկապարտեզի լուսամուտների և դռների տեղադրում,
- ամբուլատորիայի տանիքի վերանորոգում,
- երաժշտական դպրոցի գույքի ձեռքբերում,
- փողոցների հիմնանորոգում,

և նույնիսկ

- ջրօգտագործման ծախսերի մասնակի մարում:

Այնինչ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը ներառված են համայնքի պարտադիր խնդիրների շարքում և դրանց լուծումը ՏԻՄ-երը պարտավոր են ապահովել սեփական լիազորությունների շրջանակում:

Կասկածից վեր է, որ համայնքային բյուջեի սղությունը խիստ կերպով սահմանափակում է ՏԻՄ-երի սեփական լիազորությունների կատարման հնարավորությունները: Սակայն, անթույլատրելի է պետության բյուջեից հատկացվող նպատակային բնապահպանական սուբվենցիաների վատնումը ՏԻՄ-ի պարտադիր խնդիրների լուծման համար: Դրանց լուծման համար գոյություն ունեն համայնքային բյուջեի համալրման այլ աղբյուրներ՝ դոտացիաներ, սուբսիդիաներ, ֆինանսավորման այլ նպատակային աղբյուրներ:

Նպատակային ֆինանսական հատկացումների նկատմամբ պետական խիստ վերահսկողության բացակայությունը, դրանց ծախսման եղանակների հանդեպ ոչ սկզբունքային վերաբերմունքը բացառում են ՏԻՄ-ի աշխատանքի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, մասնակցային կառավարման հնարավորությունը, և, ամենավտանգավորը՝ խթան են դառնում կամայական ոճով անվերահսկելի կառավարման համար: Դա են վկայում 30 ազդակիր համայնքներում տեղի բնակիչների ներկայացուցիչների շրջանում անցկացված հարցման արդյունքները:

ՀԱՐՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հարցումը «Խազեր» ՀԿ-ի պատվերով իրականացրել է «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» (ՀՌԿԿ) հիմնադրամը Հայաստանի վեց մարզերի բնապահպանության սուբվենցիա ստացած 30 ազդակիր համայնքներում դեմ առ դեմ հանդիպումների միջոցով:

«Խազեր» ՀԿ-ի մշակած և ՀՌԿԿ ներկայացուցիչների հետ մի շարք հանդիպումների արդյունքում լրամշակված կիսաձևայնացված հարցաթերթը, որը բերված է Հավելված 2-ում, բաղկացած է հետևյալ ութ բաժիններից,

1. Իրազեկվածություն եվ մասնակցություն
2. Ջրամատակարարում, ոռոգում
3. Կենցաղ, լուսավորություն, ճանապարհներ, աղբահանություն
4. Կանաչապատում, բնապահպանություն
5. Անտառ, հատուկ պահպանվող տարածք
6. Կլիմայի փոփոխություն
7. Տիմ գործունեություն
8. Սոցիալական եվ ժողովրդագրական տվյալներ:

Հետազոտությունը ներառել է 2004-2017 թթ. ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից տրամադրված սուբվենցիաները ստացած 30 համայնքներից պատահականորեն ընտրված 600 չափահաս բնակիչ: Յուրաքանչյուր համայնքում տնային տնտեսությունների ընտրությունը իրականացվել է պատահական քայլի մեթոդով (յուրաքանչյուր 4-րդ տնային տնտեսություն) 2017թ. ընտրատեղամասերի ցուցակից պատահականորեն ընտրված տեղամասից: Տնային տնտեսությունում հարցվողների ընտրությունն իրականացվել է առաջիկա ծննդյան օրվա մեթոդով:

Ընտրանքի բաշխումը ըստ թիրախ համայնքների ներակայացված է ստորև աղյուսակում:

	Համայնքի անվանումը	Կլաստերների քանակը
ԼՈՌԻ		
1	Ալավերդի	6
2	Օձուն	1
3	Աքորի	1
4	Հաղպատ	1
5	Հագվի	1
6	Ախթալա	1
7	Շնող	1
8	Մեծ Այրում	1
ՍՅՈՒՆԻՔ		
9	Քաջարան	2
10	Կապան	6
11	Սյունիք	1
12	Լեռնաձոր	1
13	Կարճևան	1
14	Ագարակ	1
ԿՈՏԱՅՔ		
15	Հրազդան	6
16	Չարենցավան	4
17	Մեղրաձոր	1
18	Ծաղկաձոր	1
ԱՐՄԱՎԻՐ		
19	Արտաշատ	6
20	Արարատ	6
21	Մեծամոր	3
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ		
22	Սոթք	1
ՏԱՎՈՒՇ		
23	Այրում	1
24	Արճիս	1
25	Դեղձավան	0.5
26	Դեբեդավան	0.5
27	Բագրատաշեն	1
28	Հաղթանակ	1
29	Պտղավան	1
30	Զորական	1
	ԸՆԴԱՄԵՆԸ	**60**

Նվազագույն ներկայացվածությունն ապահովելու համար յուրաքանչյուր համայնքում պատահականորեն ընտրվել են թվով 10 հարցվողներ: Բաշխումը իրականացվել է հաշվի առնելով ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից տրամադրված սուբվենցիաները 2004-2017 թթ. և տվյալ համայնքներում բնակչության թիվը: Դեղձավան և Դեբեդավան համայնքներում բնակչության թիվը, տրամադրված սուբվենցիաների գումարի փոքր ծավալը, ինչպես նաև համայնքների՝ իրարից ունեցած հեռավորությունը հաշվի առնելով, ընտրվել են յուրաքանչյուրում հինգական հարցվողներ:

Դեմ առ դեմ հարցազրույցների միջոցով տվյալների հավաքագրումը տեղի է ունեցել CAPI համակարգով գործող դյուրակիր սարքի օգնությամբ: Տվյալները հավաքագրվել են 2018 թ. օգոստոսի 12-25: Հարցման տևողությունը միջինում կազմել է 20 րոպե:

Դաշտային աշխատանքներն իրականացվել են ՀՌԿԿ-ի հմուտ 14 զրուցավարներ: Ընդհանուր համակարգումը և որակի ստուգումն իրականացվել են դաշտային աշխատանքների համակարգողի և տվյալներ հավաքագրման ղեկավարի ուժերով:

ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏԻՄ-ԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ստորև բերված են ՏԻՄ-երի աշխատանքի և ինքնակառավարման մեջ տեղի բնակչության ներգրավվածության աստիճանի վերաբերյալ հարցման մասնակիցների կարծիքները:

Հարց՝ Գնահատե՛ք ՏԻՄ-ի աշխատանքը:



Բերված տվյալները թույլ են տալիս արձանագրել, որ հարցման մասինակիցները ՏԻՄ-երի աշխատանքը հիմնականում բավարար են գնահատում: Սակայն, կարևոր էր պարզել, թե որքանո՞վ են համայնքների բնակիչները ներգրավված տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացում:

Հարց՝ Ունե՞ք արդյոք Ձեզ հուզող հարցերի վերաբերյալ տեղական մակարդակում որոշումների կայացման վրա ազդելու հնարավորություն:



Պատկերը բավական մտահոգիչ է: Հարցման ենթարկվածների 74%-ը չունի տեղական ինքնակառավարման մակարդակում որոշումների վրա ազդելու հնարավորություն:

Հետաքրքիր էր պարզել նաև, արդյո՞ք ՏԻՄ-երն իրենք շահագրգիռ են որոշումների կայացման գործընթացում բնակիչներին ներգրավելու խնդրում:

Հարց՝ Գնահատե՛ք որոշումների կայացման գործընթացում բնակիչներին ներգրավելու ՏԻՄ-ի ջանքերը:



Ստացվում է, որ **բնակիչները չունեն իրենց հուզող հարցերի վերաբերյալ տեղական մակարդակում որոշումների կայացման վրա ազդելու հնարավորություն, իսկ ՏԻՄ-րն էլ իրենց հերթին չեն ջանում տալ այդ հնարավորությունը:**

Հարցման մասնակիցներին առաջարկվել էր գնահատել համայնքային բյուջեի եկամուտների մասին իրենց տեղեկացվածության աստիճանը:

Հարց՝ Որքանո՞վ եք տեղեկացված համայնքային բյուջեի եկամուտների մասին:



Համայնքային բյուջեի ծախսերի մասին հարցման մասնակիցների տեղեկացվածության աստիճանը հետևյալն է.

Հարց՝ Որքանո՞վ եք տեղեկացված համայնքային բյուջեի ծախսերի մասին:



Համայնքային բյուջեի հաշվին կատարված գնումների մասին հարցման մասնակիցների տեղեկացվածության մակարդակի վերաբերյալ տվյալները հետևյալն են.

Հարց՝ Գնահատե՝ք ՏԻՄ-ի կատարած գնումների վերաբերյալ Ձեր տեղեկացվածության աստիճանը:



Ստացված արդյունքներից կարելի է եզրակացնել, որ **հարցման մասինակիցները ՏԻՄ-երի աշխատանքը թեև բավարար են գնահատում, իրականում այն գնահատելու համար ամենևին էլ տեղեկացված չեն:** Դրա մասին են վկայում հարցման մասնակիցների մոտ 70%-ի ընտրած «Վատ», «Շատ վատ» և «Դժվարանում եմ պատասխանել» տարբերակները:

Ամփոփելով հարկ է նշել, որ **համայնքների կառավարումը շատ հեռու է մասնակցային լինելուց, այնինչ ՏԻՄ - համայնքի բնակիչ սերտ փոխհարաբերությունները պետք է որ նպաստեին դրան**:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԸ

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն « ... ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից մասհանումներ կատարվում և առանձին տողով արտացոլվում են այն համայնքների բյուջեներում, որոնց տարածքում նշված ընկերությունների գործունեությունը թողնում է վնասակար ազդեցություն: Համայնքների ցանկը և բնապահպանական հարկից նրանց վարչական և ֆոնդային բյուջեներ մասհանվող գումարների չափերը յուրաքանչյուր տարվա համար հաստատվում են տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով: Մասհանումները տվյալ բյուջետային տարվա ընթացքում կատարվում են անմիջապես պետական բյուջեից՝ սուբվենցիայի տեսքով ... »:

«Սույն օրենքով մասհանումները կատարվում են ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված՝ արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման, ջրային ռեսուրս վնասակար նյութերի և միացությունների արտահոսքի, ինչպես նաև ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնների հատուկ հատկացված տեղերում տեղադրման և (կամ) պահման համար բնապահպանական հարկի գումարներից»:

Նույն օրենքի Հոդվածի 2-ի համաձայն «Բնապահպանական հարկից համայնքների վարչական և ֆոնդային բյուջեներ մուտքագրվող մասհանումները հանդիսանում են նպատակային միջոցներ և օգտագործվում են տվյալ համայնքների տարածքում բացառապես բնապահպանական ծրագրերի իրականացման համար»:

Օրենքի պահանջով նման ծրագիրը պետք է ներառի՝

ա) համայնքի վարչական սահմաններում գտնվող հողային, ջրային և օդային տարածքներում ընկերությունների գործունեությամբ պայմանավորված՝ բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը և շրջակա միջավայրի պահպանությանը նպատակաուղղված ներքոհիշյալ միջոցառումները՝

- ✓ **թափոնների օգտահանման,** դրանց անվտանգ հեռացման, թափոնների հեռացման մասնագիտացված պոլիգոնների ստեղծման, գործող աղբավայրերի բարելավման, աղտոտված տարածքների մաքրման ու վերականգնման գործողություններ,
- ✓ **կեղտաջրերի վերամշակումը**, կեղտաջրերի վերամշակման և կոյուղու համակարգերի կառավարման, կառուցման, պահպանման կամ բարելավման գործողություններ,
- ✓ **շրջակա միջավայրի տեղական և տարածաշրջանային աղտոտվածության դեմ պայքար**, որը ներառում է.
  - **մթնոլորտային օդի մաքրության պահպանության**, **ջրային ռեսուրսների (մակերևութային և ստորերկրյա) պահպանության**, աղմուկի և վիբրացիայի դեմ պայքարի և ճառագայթահարման դեմ պաշտպանության հետ կապված աշխատանքներ և գործողություններ (վերահսկողության համակարգերի և կայանների կառուցում, պահպանում և շահագործում, աղմկակլանիչ շինությունների և միջոցների կառուցում,
  - **ջրային ռեսուրսների և դրանց ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների մաքրման միջոցառումներ**,
  - **մթնոլորտային օդի որակի վրա բացասաբար ազդող ջերմոցային գազերի և աղտոտող նյութերի հսկողության կամ կանխարգելիչ միջոցառումներ**,
  - **աղտոտված հողի մաքրման, ինչպես նաև աղտոտող նյութերի վնասազերծման համակարգերի և սարքավորումների կառուցում, շահագործում և պահպանում**,
  - **կենսաբազմազանության և անտառների պահպանում,**
  - **բնության հատուկ պահպանվող տարածքների կենսաբանական ռեսուրսների պահպանության** և կայուն օգտագործման գծով գործողություններ, որոնք ներառում են կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների պահպանության (այդ թվում՝ անհետացած և անհետացող տեսակների վերականգնման), կենդանիների բնադրավայրերի և բնության գեղագիտական արժեքների պահպանության (այդ թվում՝ խախտված տարածքների գեղագիտական արժեքի բարձրացման նպատակով դրանց վերականգնման, **սպառված հանքավայրերի տարածքների ռեկուլտիվացիայի**) աշխատանքներ,

- շրջակա միջավայրի պահպանության գծով **կիրառական հետազոտական և փորձարարական նախագծային աշխատանքներ, շրջակա միջավայրի վրա ներգործության հետազոտություններ և (կամ) ուսումնասիրություններ,**
- **շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ տեղեկատվության տարածման կամ իրազեկման, էկոլոգիական կրթության գծով աշխատանքներ և գործողություններ**,
- **բնապահպանությանը վերաբերող վերապատրաստական դասընթացների կազմակերպում և ինստիտուցիոնալ ամրապնդում**,
- **համայնքահեն բնապահպանական հասարակական կազմակերպություններին սույն կետում նշված միջոցառումների կատարման համար աջակցության** ցուցաբերում.

բ) ընկերությունների գործունեությամբ պայմանավորված՝ համայնքի բնակչության առողջության պահպանմանը նպատակաուղղված ներքոհիշյալ միջոցառումները՝

- ✓կապված շրջակա միջավայրի աղտոտման բացասական ազդեցության հետ՝ **բնակչության առողջական վիճակի զննությունների իրականացում**, դրանց իրականացման համար **անհրաժեշտ սարքավորումներով հագեցում:**

Որպես օրինակ՝ 2015թ.-ին վճարված բնապահպանական հարկի գումարը եղել է մոտ 9,000,000.0 հազ. ՀՀ դրամ, որից բնապահպանական ծրագրերին ուղղված մասհանումները կազմել են 296,862.7 հազ. ՀՀ դրամ, որը վճարված հարկի գումարի 3.3%-ն է: Կասկածելի է, որ նման չափի նպատակային մասհանումները բավարար են ազդակիր համայնքների բնապահպանական հիմնախնդիրների լուծման և շրջակա միջավայրի պահպանության օրենքով պահանջվող մակարդակն ապահովելու համար:

Ներկայացվող հարցման նպատակն էր ուսումնասիրել 2004-2017թթ.-ի ընթացքում բնապահպանական հարկից ազդակիր համայնքներին տրամադրած նպատակային մասհանումների օգտագործման փորձը, դրանց հաշվին իրականացված ծրագրերի բնույթն ու նպատակները, բացահայտել գործող մեխանիզմի թերություններն ու դրանց հաղթահարման համար անհրաժեշտ քայլերը: Հարցման նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ստանալ հետևյալ հարցերի պատասխանը.

- ✓ բավարարու՞մ են արդյոք ազդակիր համայնքներին տրամադրված նպատակային մասհանումների հաշվին իրականացված աշխատանքները օրենքի պահանջները,
- ✓ ինչպիսի՞ն է նպատակային մասհանումների արդյունավետությունը,
- ✓ որքանո՞վ են բնակիչները տեղյակ իրենց համայնքում իրականացված բնապահպանական ծրագրերին,
- ✓ որքանո՞վ է համայնքի բնակիչների համար տեսանելի իրականացված ծրագրերի արդյունքը:
- ✓ որքանո՞վ են բնակիչները ներգրավված եղել ծրագրերի մշակման և իրականացման գործընթացում,
- ✓ որքանո՞վ են դրանք համահունչ եղել տեղի բնակչության կարիքներին և պահանջներին:

Յուրաքանչյուր ազդակիր համայնքի համար բնապահպանական սուբվենցիաների արդյունավետության ցուցանիշ ենք համարել 2004–2017 թթ.-ին ընդհանուր բնապահպանական մասհանումներում նպատակային ծրագրրերի իրականացման համար ծախսված միջոցների կազմած տոկոսը:

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված նպատակային միջոցառումների արդյունքի առկայության կամ բացակայության մասին եզրակացությունը հիմնված է հարցման մասնակիցների տվյալ ծրագրերի մասին տեղյակ կամ անտեղյակ լինելու, կամ համայնքի համար դրանց ազդեցության իրենց կողմից տված գնահատականի վրա:

Հարցման ընթացքում փորձ է արվել նաև բացահայտել բնապահպանական ոլորտում ազդակիր համայնքների բնակչության կարիքները և համադրել դրանք նպատակային բնապահպանական մասհանումների հաշվին իրականացված միջոցառումների հետ:

Ստորև բերված են 30 ազդակիր համայնքներից յուրաքանչյուրում մասնակցային հարցման արդյունքները:

Նախ ներկայացնենք ազդակիր համայնքներում բնապահպանական սուբվենցիա ստանալու նպատակով ծրագրերի մշակման գործընթացում բնակիչների մասնակցության մասին վկայող տվյալները: Հարցման մասնակիցներից ընդամենը 78-ն են տեղյակ եղել նման ծրագրերի մշակման մասին, 38-ը հայտարարել են, որ տեղյակ են ծրագրերից, սակայն նկատի ունեին այլ ծրագրեր, ոչ մեկը դրանցում չէր մասնակցել և անտեղյակ էր ծրագրերիի բյուջեից:

Այսպիսով, հարցման տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ ազդակիր համայնքների բնակիչները որպես կանոն օտարված են բնապահպանական սուբվենցիաներ ստանալու նպատակով ծրագրերի մշակման և իրականացման գործընթացներից:

Արարատի մարզ

ք. Արարատ

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **60,**

Բնակիչների թիվը՝ **213**

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված ծրագրերը՝

1. Ինքնաթափ բեռնատար ավտոմեքենայի և երկաթյա աղբարկղերի ձեռքբերում:
2. Փոշեհավաք մեքենայի ձեռքբերում:
3. **Արտեզյան խորքային հորի նորոգման և գործարկման կամ կոնսերվացված հորի գործարկման նախագծա-հաշվային փաստաթղթերի մշակում և աշխատանքների իրականացում – 2016 թ./ 6,809.0 հազ. ՀՀ դրամ**

Ծախսված գումարը՝ 20,274.2 հազ.ՀՀ դրամ:

Դժվար չէ նկատել, որ թվարկած միջոցառումներից միայն «Արտեզյան խորքային հորի նորոգման և գործարկման կամ կոնսերվացված հորի գործարկման նախագծա-հաշվային փաստաթղթերի մշակում և աշխատանքների իրականացում» ծրագիրն է որոշ չափով բավարարում բնապահպանական սուբվենցիաների տրամադրման համար օրենքով սահմանված պահանջները: Մնացած երկուսը լիովին ներառված են համայնքի պարտադիր խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում:

Արարատ քաղաքին տրամադրված նպատակային բնապահպանական սուբվենցիաները կազմում են մասհանումների ընդհանուր գումարի 3%-ը: Ուիստի կարելի է եզրակացնել, որ դրանց արդյունավետությունը 3% է:

Պարզելու համար, թե որքանո՞վ են հարցման մասինակիցները տեղյակ տարածքում իրականացված ծրագրերի մասին, իրենց առաջարկել էինք պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Համայնքի բարեկարգման ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Հարցման մասնակիցների 52%-ը տեղյալ են եղել, որ ծրագրերն իրականացվել են ՏԻՄ-ի ջանքերով, սակայն 48% դժվարացել են կամ հրաժարվել են նշել դրանց կատարողին:

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված աղբահանության կազմակերպման ոչ նպատակային ծրագրերի արդյունքը տեսանելի է եղել հարցման մասնակիցների 75%-ի համար:

2016 թ.-ին բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված արտեզյան խորքային հորի նորոգման և գործարկման, կամ կոնսերվացված հորի գործարկման ծրագրի մասին տեղյակ հարցման մասնակիցները հավանաբար կազմում են համայնքում իրականացված ջրամատակարարման ծրագրին տեղյակ հարցման մասնակիցների 18%-ի որոշ մասը միայն:

Մեր ենթադրությունը հիմնավորելու կամ հերքելու համար հարցման մասնակիցներին տրվել էին հետևյալ հարցերը.

Հարց՝ Գնահատե՝ք խմելու ջուր մատակարարող համակարգի վիճակը:



Հարց՝ Գնահատե՝ք մատակարարվող խմելու ջրի քանակը:



Հարց՝ Գնահատե՝ք մատակարարվող խմելու ջրի որակը:



Ստացված պատասխաններից ելնելով հանգում ենք հետևալ կարծիքի. խմելու ջուր մատակարարող համակարգի վիճակի վրա ծրագրի դրական ազդեցությունը բնակիչների համար նկատելի չէ,

Հաշվի առնելով գյուղատնտեսությամբ զբաղվելու համար տեղի կլիմայական բարենպաստ պայմանները, փորձեցինք այդ տեսանկյունից ևս գնահատել արտեզիան հորի նորոգման և գործարկման ծրագրի արդյունքը: Այդ նպատակով հարցման մասնակիցներին խնդրեցինք գնահատել ոռոգման ջուր մատակարարող համակարգի վիճակը և մատակարարվող ոռոգման ջրի քանակը: Հարցման մասնակիցների 98%-ի համաձայն ոռոգման ջուր մատակարարող համակարգը, որպես այդպիսին, գոյություն չունի, հետևաբար՝ ոռոգման ջրի պահանջվող քանակը չի ապահովվում:

Ստացված պատասխաններից դատելով կարելի է արձանագրել, որ **բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված նպատակային արտեզյան խորքային հորի նորոգման և գործարկման, կամ կոնսերվացված հորի գործարկման ծրագիրը խմելու և ոռոգման ջուր մատակարարող համակարգերի վիճակի վրա դրական ազդեցություն չի ունեցել:**

Մեր նպատակներից էր նաև պարզել, մտահոգու՞մ են արդյոք Արարատ քաղաքի բնակիչներին բնապահպանական ոլորտի խնդիրները, ինչի համար հարցման մասնակիցներին առաջարկել էինք պատասխանել հետևյալ հարցերին.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:



Պատկերը բավական մտահոգիչ է: Իսկ ի՞նչ է արվում քաղաքում իրավիճակը շտկելու համար:

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքի բնության պահպանման աշխատանքները:



Բնակիչների մտահոգության պատճառները բացահայտելու համար հարցման մասնակիցներին տրվել էր «Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա» հարցը, որին ի պատասխան ստացվեց հետևյալ պատկերը.



Պարզել ենք նաև, որ հարցման մասնակիցների 41%-ը թվարկած մարդածին վնասակար գործոնների ազդեցության տեսանկյունից առավել խոցելի են ճանաչել **մարդկանց առողջությունը:**

Արարատ քաղաքում բնական միջավայրի վիճակի վրա ազդող և բնակիչներին մտահոգող գործոնները բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված ծրագրերի հետ համդրման արդյունքում ստիպված ենք արձանագրել, որ ՏԻՄ-ը մթնոլորտի ու խմելու ջրի աղտոտման, հանքերի շահագործման վնասակար ազդեցությունը կանխելուն կամ նվազեցմանն ուղղված միջոցառումների փոխարեն նպատակային բնապահպանական սուբվենցիաների 97%-ի հաշվին իրականացրել են բացառապես ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում ներառված միջոցառումներ:

ք.Արտաշատ

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ 60,

Բնակիչների թիվը՝ 147

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ծրագիրը՝

Քաղաքային լճի վերակառուցում, տարածքի բարեկարգում:

Ծախսված գումարը՝ 40,267.2 հազ. ՀՀ դրամ

Արտաշատ քաղաքում բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված միակ ծրագիրը դժվար է համարել բնապահպանական սուբվենցիաների տրամադրման համար օրենքի պահանջին բավարարող: Ուստի, **Արտաշատ քաղաքին տրամադրված նպատակային բնապահպանական սուբվենցիայի արդյունավետությունը 0% է:**

«Համայնքի բարեկարգման ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ» հարցին ի պատասխան հարցման մասնակիցները թվարկել են իրենց տարածքում իրականացրած մի շարք այլ նմանատիպ ծրագրեր.



Հարցման մասնակիցների 91%-ը վկայում են, որ այդ ծրագրերն իրականացվել են ՏԻՄ-ի նախաձեռնությամբ:

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված քաղաքային լճի տարածքի բարեկարգման ոչ նպատակային ծրագրի արդյունքը որպես տարածքի բարեկարգում նկատել են հարցման մասնակիցների 55%-ը:

Հարցման ընթացքում փորձ է արվել ստանալ տարածքի բնապահպանական ոլորտի խնդիրների վերաբերյալ Արտաշատ քաղաքի բնակիչների գնահատականը.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:



Հետևյալ հարցի միջոցով ուզեցինք պարզել, թե ինչպե՞ս է տեղի բնակչությունը գնահատում տարածքում իրականացվող բնապահպանական միջոցառումները:

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքի բնության պահպանման աշխատանքները:



Արտաշատ քաղաքի հարցման մասնակիցները բավարարված են իրենց տարածքի բնական միջավայրի վիճակից և բնության պահպանման ուղղությամբ կատարվող աշխատանքներից: Սակայն **«Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա»** հարցին ի պատասխան ստացվել է հետևյալ պատկերը.



Ընդ որում, հարցման մասնակիցների 35%-ը գտնում են, որ թվարկած վնասակար գործոնները առաջին հերթին բացասաբար են անդրադառնում իրենց առողջության վրա:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ Արտաշատ քաղաքի բնական միջավայրի ոչ գոհացուցիչ վիճակի պատճառը հանդիսացող և բնակիչներին հուզող մթնոլորտի, խմելու և ոռոգման ջրի աղտոտման, հանքերի շահագործման ու թափոնների տեղադրման, ինչպես նաև հողատարման ու հողերի դեգրադացիայի վնասակար գործոնների ազդեցությունը կանխելու կամ նվազեցնելու փոխարեն, բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացվել է ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում ներառված տարածքի բարեկարգման ծրագիր:

Արմավիրի մարզ

ք. Մեծամոր

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **30**

Բնակիչների թիվը՝ **103**

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված ծրագրերը՝

1. Սանիտարական մաքրման աշխատանքներ/աղբահան մեքենայի ձեռքբերում:
2. Կանաչապատ տարածքների բարեկարգում և պահպանում:
3. Բակերի կանաչապատում
4. **Անտառաշերտի ոռոգման ջրագծի կառուցում – 2015 թ./ 6,000.0 հազ. ՀՀ դրամ**

Ծախսված գումարը՝ 14,533.3 հազ. ՀՀ դրամ

Վերը թվարկածներից միայն անտառաշերտի ոռոգման ջրագծի կառուցման ծրագիրն է բավարարում բնապահպանական սուբվենցիա տրամադրելու համար օրենքով սահմանված պահանջներին: Մնացած միջոցառումները ներառված են ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում ներառված համայնքի պարտադիր խնդիրների շարքում: Այսպիսով, **Մեծամոր քաղաքին տրամադրված նպատակային բնապահպանական սուբվենցիաները կազմում են մասհանումների ընդհանուր գումարի 41%-ը, որը և դրանց արդյունավետության գնահատականն է:**

Պարզելու համար, թե արդյո՞ք հարցման մասինակիցները տեղյակ են իրենց տարածքում իրականացված ծրագրերի մասին, տրվել էր հետևյալ հարցը.

Հարց՝ Համայնքի բարեկարգման ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Հարցման մասնակիցների 63%-ի կարծիքով թվարկած ծրագրերն իրականացվել են ՏԻՄ-ի ջանքերով, 27%-ը հիշատակել են անհատ բարերարի, կամ բարեգործական կազմակերպություն, իսկ 6%-ը՝ միջազգային կազմակերպություն:

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված ծրագրերի շարքում միայն ջրամատակարարման և ծառատնկման ծրագրերն է կարելի կապել անտառաշերտի ոռոգման ջրագծի կառուցման հետ, որի հիշատակողները կազմել են հարցման մասնակիցների 30 և 3%-ը համապատասխանաբար: Ուստի կարող ենք արձանագրել, որ **բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ծրագիրի նպատակային արդյունքը չի գերազանցում 30%-ը:**

Պարզելու համար, թե բնապահպանական ոլորտի ի՞նչ խնդիրներ են մտահոգու՞մ Մեծամոր քաղաքի բնակիչներին, հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:



Բնական միջավայրի վիճակը հարցման մասնակիցների գնահատմամբ բավարար է: Հետքրքիր է, ինչպիսի՞ն է այդ ուղղությամբ տարվող աշխատանքի գնահատականը:

Հարց՝ Գնահատե՛ք բնության պահպանման աշխատանքները:



Այս գնահատականները կարելի է վերագրել անտառաշերտի ոռոգման ջրագծի կառուցման աշխատանքներին, ուստի հարցման մասնակիցների գնահատմամբ բնության պահպանման աշխատանքները բավարար համարելու հիմք չկա:

Պարզելու համար, թե հարցման մասնակիցների կարծիքով ի՞նչ ուղղությամբ պետք է տարվեն բնական միջավայրի վիճակի բարելավման աշխատանքները, իրենց առաջարկվեց պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:



Մեծամոր քաղաքի հարցման մասնակիցների 55%-ը գտնում են, որ վերը թվարկած վնասակար մարդածին գործոններից առաջին հերթին վտանգվում է մարդկանց առողջությունը:

Ամփոփելով, կարելի է եզրակացնել, որ Մեծամոր քաղաքի իշխանությունը՝ անտեսելով բնակիչներին մտահոգող մթնոլորտի, խմելու ու ոռոգման ջրի աղտոտման, օդանավակայանի շահագործման հետ կապված աղմուկի, ատոմակայանի մոտ լինելու հետ կապված վտանգները, չի նախաձեռնել դրանց դեմ պայքարելու միջոցառումներ: Փոխարենը նպատակային բնապահպանական սուբվենցիաների մոտ 60%-ը ուղղել է ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում ներառված աշխատանքների կատարմանը:

Գեղարքունիքի մարզ

գ. Սոտք

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **10**

Բնակիչների թիվը՝ **45**

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված ծրագրերը՝

1. **Զբոսայգու կառուցում, բարեկարգում – 2012թ./ 1,009.8 հազ. ՀՀ դրամ**
2. **Հանգստի պուրակի կառուցում- 2015թ./ 10,979.5 հազ. ՀՀ դրամ**

Ծախսված գումարը՝ 11,989.3 հազ. ՀՀ դրամ

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին Սոտք գյուղում իրականացված ծրագրերը կարող են համարվել նպատակային բնապահպանական ուղղվածության միջոցառումներ: Հետևաբար, **Սոտք գյուղին տրամադրված բնապահպանական սուբվենցիաների արդյունավետությունը գնահատվում է 100%:**

Հարցման նպատակներից էր պարզել, թե որքո՞ն են Սոտք գյուղի բնակիչները տեղյակ իրենց տարածքում իրականացված ծրագրերի մասին.

Հարց՝ Համայնքի բարեկարգման ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Հարցման մասնակիցները միաձայն վկայում են, որ ծրագրերն իրականացվել են ՏԻՄ-ի ջանքերով, բայց ոմանք հիշատակում են նաև հասարակական և միջազգային կազմակերպություններ:

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված զբոսայգու և հանգստի պուրակի կառուցման նպատակային ծրագրերի արդյունքը որպես տարածքի բարեկարգում նկատելի է հարցման մասնակիցների 90%-ի համար, ուստի դրանք կարելի է 90% արդյունք տված համարել:

Սոտք գյուղի բնակիչների մտահոգությունները, կապված տարածքի բնապահպանական խնդիրների հետ, բացահայտելու համար հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՝ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:



Իսկ ի՞նչ կարծիքի են հարցման մասնակիցները տարածքում տարվող բնության պահպանման աշխատանքների մասին հարցին ի պատասխան ստացվեց հետևյալ արդյունքը.

Հարց՝ Գնահատե՝ք բնության պահպանման աշխատանքները:



Պարզելու համար ինչպիսի՞ վնասակար մարդածին գործոններ են մտահոգում Սոտք գյուղի բնակիչներին, հարցման մասնակիցներին առաջարկվեց պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:



Սոտք գյուղում ևս հարցման մասնակիցների կարծիքով թվարկած վնասակար մարդածին գործոնները առաջին հերթին վտանգում են մարդկանց առողջությունը:

Ամփոփելով, եզրակացնում ենք, որ Սոտք գյուղի ՏԻՄ-ի առաջ կան ուշադրության արժանի բնակիչներին մտահոգող մթնոլորտի, խմելու ու ոռոգման ջրի աղտոտման, անտառահատման, հանքերի շահագործման և թափոնների տեղադրման, հողատարման ու հողերի դեգրադացիայի դեմ պայքարի հետ կապված խնդիրներ և բնապահպանական սուբվենցիաները պետք է ուղղված լինեն դրանց լուծմանը:

Կոտայքի մարզ

ք. Չարենցավան

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ 40

Բնակիչների թիվը՝ 121

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված ծրագրերը՝

1. **Դեկորատիվ և փշատերև ծառերի տնկում – 2010թ., 2012թ., 2014թ., 2015թ., 2016թ./ 3,692.6 հազ. ՀՀ դրամ**
2. Աղբարկղերի ձեռքբերում

Ծախսված գումարը՝ 4,668.2 հազ. ՀՀ դրամ

Վերը թվարկած միջոցառումներից դեկորատիվ և փշատերև ծառերի տնկման ծրագիրը ներառված է բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացման ենթակա նպատակային ծրագրերի շարքում, իսկ աղբահանության կազմակերպման հետ կապված միջոցառումը գտնվում է ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում:

Արդյունքում արձանագրում ենք, որ **Չարենցավան քաղաքին տրամադրված բնապահպանական սուբվենցիաների արդյունավետությունը 79% է:**

Հարցման մասնակիցներին ստորև բերված հարցը տրվել էր պարզելու համար, թե որքանո՞վ են իրենք տեղյակ համայնքում իրականացված ծրագրերի մասին.

Հարց՝ Համայնքի բարեկարգման ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Հարցման մասնակիցների 84%-ը վկայում են, որ թվարկված ծրագրերն իրականացվել են ՏԻՄ-ի ջանքերով: Հարցման մասնակիցներից 5-ը հիշատակել են անհատ բարերարի, կան բարեգործական կազմակերպություն, իսկ 2-ը՝ միջազգային կազմակերպություն:

Եթե բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված ոչ նպատակային աղբահանության կազմակերպման ծրագրի արդյունքը տեսանելի է եղել հարցման մասնակիցների 90%-ի համար, ապա ծառատնկման արդյունքը նկատել են հարցման մասնակիցներից միայն 15%-ը: Հնարավոր է, որ ծառանկման ծրագրի մասին տեղյակ հարցման մասնակիցների մի մասը այդ միջոցառումը դիտարկել է որպես տարածքի բարեկարգման ծրագիր, որը նկատելի է եղել հարցման ենթարկվածներից 77%-ի համար: Ուստի, **Չարենցավան քաղաքում բնապահպանական սուբվենցայի հաշվին իրականացված ծառատնկման նպատակային ծարգրի տված արդյունքը կարելի է համարել 45%**:

Հետաքրքիր էր իմանալ՝ մտահոգու՞մ են արդյոք Չարենցավան քաղաքի բնակիչներին բնապահպանական ոլորտի խնդիրները: Այդ նպատակով հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:



Թե ինչպիսի՞ն է բնական միջավայրի բավարար վիճակի հարցում բնության պահպանման աշխատանքների դերը, թույլ կտան հասկանալ հետևյալ հարցի պատասխանները.

Հարց՝ Գնահատե՛ք բնության պահպանման աշխատանքները:



Հետաքրքիր էր պարզել նաև, թե ինչպիսի՞ն են և ի՞նչ ուժգնություն ունեն տեղի բնակչությանը մտահոգող վնասակար մարդածին գործոնները.

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:



Հարցման մասնակիցների 77%-ը գտնում են, որ իրենց տարածքում թվարկած մարդածին գործոններից ոչ մեկը չունի շոշափելի վնասակար ազդեցություն:

Չարենցավան քաղաքի իշխանությունը՝ հիմք ընդունելով տարածքում բնական միջավայրի բարվոք վիճակը և բնակիչների պասիվ հանդուրժողականությունը, անտեսում է մթնոլորտի և խմելու ջրի աղտոտման, թափոնների տեղադրման հետևանքով առաջացող վնասակար ազդեցությունը բնական միջավայրի վրա, նպատակահարմար է գտնում բնապահպանական սուբվենցիաների որոշ մասը ուղղել սեփական լիազորությունների շրջանակում ներառված աշխատանքների կատարմանը:

ք.Ծաղկաձոր

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **10**

Բնակիչների թիվը՝ **38**

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված ծրագրերը՝

1. **Փայտային կուտակումների հավաքում, տեղափոխում – 2007թ./ 1,037.0 հազ. ՀՀ դրամ**
2. **Կանաչապատում – 2015թ./ 402,0 հազ. ՀՀ դրամ**
3. **Մացառուտների մշակում – 2015 թ./ 300.0 հազ. ՀՀ դրամ**
4. **Զբոսայգու կանաչապատում – 2018թ./ 1,022,0 հազ. ՀՀ դրամ**

Ծախսված գումարը՝ 2,761.0 հազ. ՀՀ դրամ

Թվարկած ծրագրերը պայմանականորեն կարելի է դասել բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացման ենթակա նպատակային ծրագրերի շարքին: Ուստի, **Ծաղկաձոր քաղաքին տրամադրված նպատակային բնապահպանական սուբվենցիաները կազմում են մասհանումների ընդհանուր գումարի 100%-ը և դրանց հաշվին իրականացված միջոցառումների արդյունավետությունը 100% է:**

Պարզելու համար, թե որքանո՞վ են հարցման մասինակիցների համար տեսանելի իրենց տարածքում իրականացված ծրագրերը, տրվել էր հետևյալ հարցը.

Հարց՝ Համայնքի բարեկարգման ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Հարցման մասնակիցների 70%-ը վկայում են, որ թվարկած ծրագրերը իրականացվել են ՏԻՄ-ի ջանքերով: Մեկ հոգի հիշատակել էր միջազգային կազմակերպություն, իսկ 3-ը՝ դժվարացել են պատասխանել:

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված ծրագրերը հավանաբար ներառված են հարցման մասնակիցների կողմից հիշատակած տարածքի բարեկարգման (20%) և ծառատնկման (20%) ծրագրերում: Ուստի, **դրանց արդյունքի մասին հարցման մասնակիցների կարծիքը ներկայացնող հստակ տվյալներ չունենալու պատճառով արդյունքը կարելի է գնահատել 20%:**

Մտահոգու՞մ են արդյոք Ծաղկաձոր քաղաքի բնակիչներին իրենց տարածքին բնորոշ բնապահպանական խնդիրները: Այդ պարզելու նպատակով հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:

Բավարար 50%

Լավ 50%

Արդյո՞ք բնական միջավայրի բարվոք վիճակը պայմանավորված է բնական միջավայրի պահպանման աշխատանքների որակով: Դա իմանալու նպատակով հարց էր տրվել:

Հարց՝ Գնահատե՛ք բնության պահպանման աշխատանքները:



Ստացված պատասխանները թույլ են տալիս եզրակացնել, որ բնության պահպանմանն ուղղված տեղական իշխանության ջանքերը արդյունավետ են և բարձր են գնահատվում բնակիչների կողմից:

Հետաքրքիր էր պարզել՝ ինչպիսի՞ վնասակար մարդածին գործոններ են մտահոգում Ծաղկաձոր քաղաքի բնակիչներին.

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:



Հարցման մասնակիցների մեծ մասի կարծիքով Ծաղկաձոր քաղաքը զերծ է վնասակար մարդածին գործոնների ազդեցությունից, իսկ մթնոլորտի և խմելու ջրի աղտոտմամբ մտահոգ հարցման մասնակիցների 50%-ը գտնում են, որ այդ գործոնները կարող են վատ անդրադառնալ առաջին հերթին մարդկանց առողջության վրա, մինչդեռ մնացած 50%-ի կարծիքով դրանք որևէ նկատելի ազդեցություն չեն կարող ունենալ: **Նախանձելի լավատեսություն՝ն:**

Այսպիսով, արձանագրում ենք, որ Ծաղկաձոր քաղաքի իշխանությունը ապահովում է տարածքի բնական միջավայրի բարվոք վիճակը, սակայն հաշվի չի առնում բնակիչներին մտահոգող մթնոլորտի և խմելու ջրի աղտոտման վնասակար ազդեցությունը և նպատակային բնապահպանական սուբվենցիաներ ստանալու հայտերի մեջ չի ներառում այդ խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ:

գ.Մեղրաձոր

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ 10

Բնակիչների թիվը՝ 53

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված ծրագրերը՝

1. **Կանաչապատում – 2011թ./ 600.0 հազ. ՀՀ դրամ**
2. **Բնակելի թաղամասի կոյուղագծի վերականգնում – 2014թ./ 2,911.9 հազ. ՀՀ դրամ**

Ծախսված գումարը՝ 3,511.9 հազ. ՀՀ դրամ

Այս միջոցառումները կարող են ներառվել բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացման ենթակա նպատակային ծրագրերի շարքում: Հետևաբար, **Մեղրաձոր գյուղին տրամադրված բնապահպանական սուբվենցիաների արդյունավետությունը 100% է:**

Մեղրաձոր համայնքի տարածքում իրականացված բարեկարգման ծրագրերի մասին բնակիչների տեղեկացվածության մակարդակը պարզելու համար հարցման մասինակիցներին տրվել էր հետևյալ հարցը.

Հարց՝ Համայնքի բարեկարգման ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Թվարկած ծրագրերի մեծ մասը գտնվում են ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում և հարցման մասնակիցների 70%-ը վկայում են, որ դրանք իրականացվել են ՏԻՄ-ի ջանքերով: Սակայն **եթե բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ծառատնկման նպատակային ծրագրի արդյունքը նկատել են հարցման մասնակիցների 40%-ը, ապա բնակելի թաղամասի կոյուղագծի**

վերականգնման ծրագրի մասին տեղյակ են եղել հարցման մասնակիցների միայն 10%-ը, որը ծրագրի արդյունքը բավարար համարելու հիմք չի տալիս:

Մեղրաձոր համայնքի բնակիչներին մտահոգող տարածքին բնորոշ բնապահպանական ոլորտի խնդիրների մասին տեղեկանալու նպատակով հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:

Բավարար՝ **30%**

Լավ՝ **70%**

Հետևյալ հարցը տրվել էր տեղեկանալու համար Մեղրաձոր համայնքի բնական միջավայրի պահպանման աշխատանքների մասին:

Հարց՝ Գնահատե՛ք բնության պահպանման աշխատանքները:

Բավարար՝ **30%**

Լավ՝ **70%**

Ստացված պատկերից ելնելով կարելի է եզրակացնել, որ տեղական իշխանությունը ուշադիր է բնության պահպանման խնդրում, ինչը նկատվում և գնահատվում է բնակիչների կողմից:

Իսկ ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են մտահոգում Մեղրաձոր համայնքի բնակիչներին:



Հարցման մասնակիցների կարծիքով Մեղրաձոր գյուղում նշված գործոնները առաջին հերթին վատ են անդրադառնում բուսաբուծության վրա:

Այսպիսով, արձանագրում ենք, որ Մեղրաաձորի իշխանությունը թեև ապահովում է տարածքի բնական միջավայրի բավարար վիճակը, սակայն բնակիչներին մտահոգող մթնոլորտի աղտոտման և հանքերի շահագործման վնասաբեր հետևանքների դեմ միջոցառումները չի ներառում նպատակային բնապահպանական սուբվենցիաներ ստանալու համար մշակվող հայտերում:

ք.Հրազդան

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **60**

Բնակիչների թիվը՝ **185**

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված ծրագրերը՝

1. **Ծառատունկ – 2007 թ./**
2. **Գետի հունի մաքրում – 2007 թ./ 1,638.7 հազ. ՀՀ դրամ**
3. **Ջրամբարի մաքրում – 2007 թ./ 2,069.9 հազ. ՀՀ դրամ**
4. **Անտառի վերականգնում – 2007 թ./ 678.9 հազ. ՀՀ դրամ**
5. Մանկապարտեզի և դպրոցամերձ տարածքներում կանաչ գոտու վերականգնում
6. **Աջակցություն համայնքահեն բնապահպանական ՀԿ-ներին - 2012 թ./ 150.0 հազ. ՀՀ դրամ**
7. **Հեղեղատարի վերանորոգման և վերականգնման համար խողովակների ձեռքբերում – 2012 թ./ 1,082.1 հազ. ՀՀ դրամ**
8. Աղբարկղերի ձեռքբերում և տեղադրում - 2015 **թ.**

Ծախսված գումարը՝ 8,614.4 հազ. ՀՀ դրամ

Հարկ է նշել, որ վերը թվարկած ոչ բոլոր միջոցառումներն են բավարարում նպատակային բնապահպանական սուբվենցիայի տրամադրման համար օրենքով սահմանված պահանջներին: Կանաչապատումը, աղբարկղերի ձեռքբերումն ու տեղադրումը ներառված են համայնքի պարտադիր խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում: **Հրազդան քաղաքին տրամադրված նպատակային բնապահպանական սուբվենցիաները կազմում են մասհանումների ընդհանուր գումարի 72.5%-ը:**

Հարցման նպատակներից էր պարզել, թե որքանո՞վ են հարցման մասինակիցները տեղյակ իրենց տարածքում իրականացված ծրագրերից.

Հարց՝ Համայնքի բարեկարգման ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Հարցման մասնակիցների 40%-ը Հրազդան քաղաքում իրականացված բարեկարգման որևէ ծրագրից տեղյակ չէր: Ծրագրերից տեղյակ հարցման մասնակիցների պնդմամբ դրանք իրականացվել են ՏԻՄ-ի նախաձեռնությամբ և ուժերով:

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված կանաչապատման և աղբահանության կազմակերպման ոչ նպատակային ծրագրերից տեղյակ էին հարցման մասնակիցներից համապատասխանաբար 25 և 37%-ը: Իսկ ինչ վերաբերվում է **բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված նպատակային ծրագրերին, ապա դրանց արդյունքը տեսանելի էր հարցման մասնակիցների ոչ ավելի քան 2, կամ 3%-ի համար, ուստի և դրանք արդյունք չեն տվել:**

Հարցման մասնակիցներից որևէ մեկը չի հիշել իրենց քաղաքում 2012 թ.-ին իրականացված բնապահպանական ուղղվածության «Աջակցություն համայնքահեն բնապահպանական ՀԿ-ներին» ծրագրի մասին:

Պարզելու համար Հրազդան քաղաքի բնակիչներին մտահոգող բնապահպանական ոլորտի խնդիրները, հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:



Գնահատականը խիստ բացասական է: Պարզելու համար, թե ինչո՞վ է պայմանավորված բնակիչների դժգոհությունը, հարցման մասնակիցներին խնդրել էինք պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնության պահպանման աշխատանքները:



Հարցման արդյունքից կարելի է եզրակացնել, որ բնության պահպանման աշխատանքներ համայնքում չեն տարվում: Հասկանալու համար, թե ի՞նչ գործոններ են մտահոգում քաղաքի բնակիչներին, հարցման մասնակիցներին առաջարկվել էր պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:



Հրազդան քաղաքում այս հարցին պատասխանած մասնակիցները գտնում են, որ վերը թվարկած մարդածին գործոններից առաջին հերթին վնասվում է մարդկանց առողջությունը:

Ամփոփելով, հարկ է եզրակացնել, որ Հրազդան քաղաքի բնության պահպանմանը՝ մասնավորապես, անտառի վերականգնմանն ողղված ՏԻՄ-ի ջանքերը արդյունք չեն տվել, բնակիչներին մտահոգող մթնոլորտի աղտոտման դեմ պայքարի միջոցառումներ չեն ձեռնարկվել: Փոխարենը, նպատակային բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացվել են ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում ներառված տարածքի բարեկարգման և աղբահանության կազմակերպման աշխատանքներ:

Տավուշի մարզ

ք.Այրում

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **10**

Բնակիչների թիվը՝ **39**

ՏԻՄ-ի աշխատակազմի անդամ՝ 1

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ծրագիրը՝

Աղբահանության կազմակերպում

Ծախսված գումարը՝ 1,200.0 հազ. ՀՀ դրամ

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված աղբահանության կազմակերպումը չի բավարարում բնապահպանական սուբվենցիաների տրամադրման համար օրենքով սահմանված պահանջներին: Հետևաբար, **Այրում քաղաքին տրամադրված բնապահպանական սուբվենցիայի արդյունավետությունը 0% է:**

Որքանո՞վ են գյուղի բնակիչները տեղյակ իրենց տարածքի բարեկարգման ծրագրերի մասին հարցի պատասխանն իմանալու նպատակով հարցման մասնակիցներին ուղղեցինք հետևյալ հարցը.

Հարց՝ Համայնքի բարեկարգման ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Պատասխանում թվարկած բոլոր միջոցառումները ներառված են համայնքի պարտադիր խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում: Հարցման մասնակիցների 50%-ը վկայում

են, որ ծրագիրն իրականացվել է ՏԻՄ-ի ջանքերով, իսկ 1 մասնակից ծրագրի իրականացնող է ճանաչել միջազգային կազմակերպություն:

Հարցման համաձայն բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված աղբահանության կազմակերպման ոչ նպատակային ծրագրի արդյունքը հարցման մասնակիցներից 50%-ի համար տեսանելի է:

Համայնքի սանիտարական վիճակի մասին բնակիչների կարծիքը պարզելու համար, հարցման մասնակիցներին առաջարկեցինք պատասխանել հետևյալ հարցին.

Մտահոգու՞մ են արդյոք Այրումի բնակիչներին բնապահպանական ոլորտի խնդիրները:

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:

Վատ՝ **30%**

Բավարար՝ **70%**

Իսկ ինչպե՞ս են գնահատում բնակիչները տարածքի բնության պահպանման աշխատանքները:

Հարց՝ Գնահատե՛ք բնության պահպանման աշխատանքները:



Իսկ, մասնավորապես, ի՞նչ խնդիրներ են մտահոգում բնակիչներին: Հարցման մասնակիցներին առաջարկվեց պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:



Այրում քաղաքի հարցման մասնակիցները գտնում են, որ թվարկած մարդածին գործոնների ազդեցության հետևանքները վատ են անդրադառնում առաջին հերթին իրենց առողջության վրա:

Եզրակացություն. Այրում քաղաքի ՏԻՄ-ը բնակիչներին մտահոգող անտառահատման, ոռոգման ջրի աղտոտման, հողատարման և հողերի դեգրադացիայի, հանքերի շահագործման արդյունքում առաջացող վնասակար ազդեցության դեմ միջոցառումներ ձեռնարկելու փոխարեն նպատակային բնապահպանական սուբվենցիան ուղղել է սեփական լիազորությունների շրջանակում ներառված աղբահանության կազմակերպման աշխատանքների կատարմանը:

գ.Արճիս

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **10**

Բնակիչների թիվը՝ **40**

ՏԻՄ-ի աշխատակազմի անդամ՝ 1

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ծրագիրը՝

Աղբահանության կազմակերպում

Ծախսված գումարը՝ 1,274.4 հազ. ՀՀ դրամ

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված աղբահանության կազմակերպումը չի բավարարում բնապահպանական սուբվենցիաների տրամադրման համար օրենքով սահմանված պահանջները: Ուստի հարկ է համարել, որ **Արճիս գյուղին տրամադրված բնապահպանական սուբվենցիայի արդյունավետությունը 0% է:**

Որքանո՞վ են գյուղի բնակիչները տեղյակ իրենց տարածքի բարեկարգման ծրագրերի մասին: Պատասխանն իմանալու նպատակով հարցման մասնակիցներին ուղղեցինք հետևյալ հարցը.

Հարց՝ Համայնքի բարեկարգման ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Պատասխանում թվարկած միջոցառումները ներառված են համայնքի պարտադիր խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում: Հարցման մասնակիցների 40%-ը վկայում են, որ ծրագրերն իրականացվել են ՏԻՄ-ի ջանքերով, իսկ 60%-ի կարծիքով ծրագրերն իրականացնողը միջազգային կազմակերպություն էր:

Հարցման համաձայն բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված աղբահանության կազմակերպման ոչ նպատակային ծրագրի արդյունքը հարցման մասնակիցներից 70%-ի համար տեսանելի է:

Նպատակ ունենալով իմանալ Արճիս գյուղի բնակիչների կարծիքը համայնքի սանիտարական վիճակի մասին, հարցման մասնակիցներին առաջարկեցինք պատասխանել հետևյալ հարցին.

Մտահոգու՞մ են արդյոք Արճիս գյուղի բնակիչներին բնապահպանական ոլորտի խնդիրները:

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:



Իսկ ինչպե՞ս են գնահատում բնակիչները տարածքի բնության պահպանման աշխատանքները:

Հարց՝ Գնահատե՛ք բնության պահպանման աշխատանքները:



Արճիս գյուղի բնակիչները բնական միջավայրի վիճակը և բնության պահպանման աշխատանքները բավարար են գնահատել: Սակայն բնության պահպանման ոլորտում ի՞նչ խնդիրներ են մտահոգում իրենց: Հարցման մասնակիցներին առաջարկվեց պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:



Խնդիրները բազմազան են: Արճիս գյուղի հարցման մասնակիցները գտնում են, որ թվարկած մարդածին գործոնների ազդեցության հետևանքները վատ են անդրադառնում և իրենց առողջության, և բուսաբուծության վրա:

Եզրակացություն. Արճիս գյուղի ՏԻՄ-ը բնակիչներին մտահոգող անտառահատման, մթնոլորտի ու ոռոգման ջրի աղտոտման, հողատարման և հողերի դեգրադացիայի, հանքերի շահագործման արդյունքում առաջացած վնասակար ազդեցության դեմ պայքարելու փոխարեն նպատակային բնապահպանական սուբվենցիան ուղղել է սեփական լիազորությունների շրջանակում ներառված աղբահանության կազմակերպման աշխատանքների կատարմանը:

գ. Բագրատաշեն

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **10**

Բնակիչների թիվը՝ **42**

ՏԻՄ-ի աշխատակազմի անդամ՝ 3

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ծրագիրը՝
Ոռոգման ջրագծի կառուցում – 2017 թ.

Ծախսված գումարը՝ 2,219.2 հազ. ՀՀ դրամ

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ոռոգման ջրագծի կառուցումը բավարարում է բնապահպանական սուբվենցիաների տրամադրման համար օրենքով սահմանված պահանջները: Հետևաբար, **Բագրատաշեն գյուղին տրամադրված նպատակային բնապահպանական սուբվենցիայի արդյունավետությունը 100% է:**

Սակայն, որքանո՞վ են գյուղի բնակիչները տեղյակ իրենց տարածքի բարեկարգման ծրագրերի մասին: Պատասխանն իմանալու նպատակով հարցման մասնակիցներին ուղղեցինք հետևյալ հարցը.

Հարց՝ Համայնքի բարեկարգման ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Պատասխանում թվարկած միջոցառումները ներառված են համայնքի պարտադիր խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում: Հարցման մասնակիցների 68%-ը վկայում են, որ ծրագրերն իրականացվել են ՏԻՄ-ի ջանքերով: Սակայն **բնապահպանական սուբվենցիայի հաշվին ոռոգման ջրագծի կառուցման ծրագրի մասին հարցման մասնակիցները տեղյակ չէին:**

Բագրատաշեն համայնքում ոռոգման ջրագծի կառուցման ծրագրի արդյունքը գնահատելու նպատակով հարցման մասնակիցներին առաջարկեցինք պատասխանել հետևյալ հարցերին.

Հարց՝ Գնահատե՝ք ոռոգման ջուր մատակարարող համակարգի վիճակը:



Հարց՝ Գնահատե՝ք մատակարարվող ոռոգման ջրի քանակը:



Տվյալները վկայում են, որ նպատակային բնապահպանական սուբվենցիայի հաշվին Բագրատաշեն գյուղում 2017 թ.-ին իրականացված ոռոգման ջրագծի կառուցման արդյունքը կարելի է համարել 100%:

Մտահոգու՞մ են արդյոք Բագրատաշեն գյուղի բնակիչներին բնապահպանական ոլորտի խնդիրները:

Հարց՝ Գնահատե՝ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:



Ինչպե՞ս են գնահատում հարցման մասնակիցները տարածքի բնության պահպանման աշխատանքները:

Հարց՝ Գնահատե՝ք բնության պահպանման աշխատանքները:



Բագրատաշեն գյուղի բնական միջավայրի վիճակը և բնության պահպանման աշխատնքները բավարար են գնահատվել: Սակայն ի՞նչ խնդիրներ են մտահոգում բնակիչներին բնության պահպանման ոլորտում: Հարցման մասնակիցներին առաջարկվեց պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:



Թվարկածների շարքում բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ծրագրի տեսանկյունից ուշագրավ է ոռոգման ջրի աղտոտման խնդիրը: Այդ առումով բնական է, որ Բագրատաշեն գյուղի հարցման մասնակիցների կարծիքով թվարկած մարդածին գործոնների ազդեցության հետևանքները վատ են անդրադառնում և իրենց առողջության և բուսաբուծության վրա:

Եզրակացություն. Բագրատաշեն գյուղի ՏԻՄ-ը բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացրել է ոռոգման ջրագծի կառուցման նպատակային ծրագիրը:

գ. Դեբեդավան

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **10**

Բնակիչների թիվը՝ **51**

ՏԻՄ-ի աշխատակազմի անդամ՝ **3**

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ծրագիրը՝
Աղբահանության կազմակերպում

Ծախսված գումարը՝ 682.2 հազ. ՀՀ դրամ

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված աղբահանության կազմակերպման ծրագիրը չի բավարարում բնապահպանական սուբվենցիաների տրամադրման համար օրենքով սահմանված պահանջները: Ուստի, **Դեբեդավան գյուղին տրամադրված բնապահպանական սուբվենցիայի արդյունավետությունը 0% է:**

Որքանո՞վ են գյուղի բնակիչները տեղյակ իրենց տարածքի բարեկարգման ծրագրերի մասին: Հարցի պատասխանն ունենալու համար հարցման մասնակիցներին տվեցինք հետևյալ հարցը.

Հարց՝ Համայնքի բարեկարգման ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Պատասխանում թվարկած բոլոր միջոցառումները ներառված են համայնքի պարտադիր խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում: Հարցման մասնակիցների 20%-ն է կարծում, որ ծրագրերն իրականացվել են ՏԻՄ-ի ջանքերով, իսկ 40%-ը որպես ծրագրի իրականացնող են ճանաչել միջազգային կազմակերպություն:

Հարցման համաձայն Դեբեդավան գյուղում բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված աղբահանության կազմակերպման ոչ նպատակային ծրագրի արդյունքը հարցման մասնակիցների 90%-ի համար տեսանելի է:

Գյուղի սանիտարական վիճակի մասին բնակիչների կարծիքը պարզելու համար, հարցման մասնակիցներին առաջարկեցինք պատասխանել հետևյալ հարցին.

Մտահոգու՞մ են արդյոք Դեբեդավան գյուղի բնակիչներին բնապահպանական ոլորտի խնդիրները, Հարցի պատասխանը ստանալու համար հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:



Արդյո՞ք ստացված արձագանքի հիմքում բնության պահպանման աշխատանքների ոչ պատշաճ մակարդակն է: Հարցման մասնակիցների կարծիքն իմանալու նպատակով իրենց տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք բնության պահպանման աշխատանքները:



Պարզելու համար, թե բնապահպանության ոլորտում ի՞նչ խնդիրներ են մտահոգում բնակիչներին, հարցման մասնակիցներին առաջարկվեց պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:



Դեբեդավան գյուղի հարցման մասնակիցները գտնում են, որ թվարկած մարդածին գործոնների ազդեցության հետևանքները վատ են անդրադառնում ինչպես իրենց առողջության վրա, այնպես էլ բուսաբուծության վրա՝ հարուցելով նաև նյութական վնաս:

Եզրակացություն. Դեբեդավան գյուղի ՏԻՄ-ը բնակիչներին մտահոգող անտառահատման և հանքերի շահագործման, հողատարում և հողերի դեգրադացիայի, մթնոլորտի, խմելու և ոռոգման ջրի աղտոտման արդյունքում առաջացող վնասակար ազդեցության դեմ միջոցառումներ ձեռնարկելու փոխարեն նպատակային բնապահպանական սուբվենցիան ուղղել է սեփական լիազորությունների շրջանակում ներառված աշխատանքների կատարմանը:

գ. Դեղձավան

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **10**

Բնակիչների թիվը՝ **38**

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ծրագիրը՝

Աղբահանության կազմակերպում

Ծախսված գումարը՝ 345.0 հազ. ՀՀ դրամ

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված աղբահանության կազմակերպման ծրագիրը չի բավարարում բնապահպանական սուբվենցիաների տրամադրման համար օրենքով սահմանված պահանջները: Արդյունքում, **Դեղձավան գյուղին տրամադրված բնապահպանական սուբվենցիայի արդյունավետությունը 0% է:**

Որքանո՞վ են գյուղի բնակիչները տեղյակ իրենց տարածքի բարեարգման ծրագրերի մասին: Ունենալու համար հարցի պատասխանը հարցման մասնակիցներին տվեցինք հետևյալ հարցը.

Հարց՝ Համայնքի բարեկարգման ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Պատասխանում թվարկած միջոցառումները ներառված են համայնքի պարտադիր խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում: Հարցման մասնակիցների 40%-ի կարծիքով ծրագրերն իրականացրել է ՏԻՄ-ը, իսկ հարցման մասնակիցների 60%-ը որպես ծրագրի իրականացնող նշել են անհատ բարերար կամ բարեգործական կազմակերպություն:

Հարցման համաձայն բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված աղբահանության կազմակերպման ոչ նպատակային ծրագրի արդյունքը հարցման մասնակիցների 60%-ի համար տեսանելի է:

Պարզելու համար, մտահոգու՞մ են արդյոք Դեղձավան գյուղի բնակիչներին բնապահպանական ոլորտի խնդիրները, հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:

Բավարար՝ **80%**

Լավ՝ **20%**

Արդյո՞ք ստացված արձագանքի հիմքում բնության պահպանման աշխատանքների պատշաճ մակարդակն է: Հարցման մասնակիցների կարծիքն իմանալու նպատակով իրենց տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք բնության պահպանման աշխատանքները:



Պարզելու համար, թե բնապահպանության ոլորտում ի՞նչ խնդիրներ են մտահոգում Դեղձավան գյուղի բնակիչներին, հարցման մասնակիցներին առաջարկեցինք պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:



Հուշագրավ արդյունք է: Դեղձավան գյուղի հարցման մասնակիցների մեծամասնությունը դժվարանում էր նշել իրենց բնակավայրին բնորոշ վնասակար մարդածին գործոնները: Ոռոգման ջրի աղտոտումը մտահոգում է հարցման մասնակիցների 20%-ին, իսկ անտառահատումը՝ միայն 10%-ին ինչը սակայն վատ է անդրադառնում և իրենց առողջության, և բուսաբուծության վրա:

Եզրակացություն. Դեղձավան գյուղի ՏԻՄ-ը բնակիչներին մտահոգող անտառահատման և ոռոգման ջրի աղտոտման արդյունքում առաջացող վնասակար ազդեցության դեմ պայքարելու փոխարեն նպատակային բնապահպանական սուբվենցիան ուղղել է սեփական լիազորությունների շրջանակում ներառված աղբահանության կազմակերպմանը:

գ. Հաղթանակ

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **10**

Բնակիչների թիվը՝ **47**

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ծրագիրը՝

Աղբահանության կազմակերպում

Ծախսված գումարը՝ 1,446.8 հազ. ՀՀ դրամ

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված աղբահանության կազմակերպման ծրագիրը չի բավարարում բնապահպանական սուբվենցիաների տրամադրման համար օրենքով սահմանված պահանջները: Ուստի, **Հաղթանակ գյուղին հատկացված բնապահպանական սուբվենցիայի արդյունավետությունը 0% է:**

Որքանո՞վ են Հաղթանակ գյուղի բնակիչները տեղյակ իրենց տարածքի բարեկարգման ծրագրերի մասին: Հարցի պատասխանը ունենալու համար հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Համայնքի բարեկարգման ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Պատասխանում թվարկած միջոցառումները ներառված են համայնքի պարտադիր խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում: Հարցման մասնակիցների 50%-ի կարծիքով ծրագրերն իրականացրել է ՏԻՄ-ը, 10%-ը որպես ծրագրի իրականացնող նշել են անհատ բարերար կամ բարեգործական կազմակերպություն, իսկ 40%-ը դժվարացել են պատասխանել:

Հարցման համաձայն բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված աղբահանության կազմակերպման ոչ նպատակային ծրագրի արդյունքը հարցման մասնակիցների 80%-ի համար տեսանելի է:

Պարզելու համար, մտահոգու՞մ են արդյոք Հաղթանակ գյուղի բնակիչներին բնապահպանական ոլորտի խնդիրները, հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:



Արդյո՞ք ստացված արձագանքը պայմանավորված է բնության պահպանման աշխատանքների պատշաճ մակարդակով: Հարցման մասնակիցների կարծիքն իմանալու նպատակով իրենց տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք բնության պահպանման աշխատանքները:



Ստացված պատկերը հակասական է: Պարզ չէ, թե ինչո՞վ է պայմանավորված Հաղթանակ գյուղի բնական միջավայրի բարվոք վիճակը:

Պարզելու համար, թե բնապահպանության ոլորտում ի՞նչ խնդիրներ են մտահոգում Հաղթանակ գյուղի բնակիչներին, հարցման մասնակիցներին առաջարկվեց պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:



Հաղթանակ գյուղի հարցման մասնակիցները թվարկել են հնարավոր վնասակար մարդածին գործոններիի ողջ ցանկը, իսկ դրանց ազդեցության արդյունքում ամենախոցելին են համարում իրենց առողջությունը:

Եզրակացություն. Հաղթանակ գյուղի ՏԻՄ-ը բնակիչներին մտահոգող բազմաբնույթ մարդածին վնասակար գործոնների վտանգավոր ազդեցության դեմ պայքարելու փոխարեն նպատակային բնապահպանական սուբվենցիան ուղղել է սեփական լիազորությունների շրջանակում ներառված աղբահանության կազմակերպմանը:

գ. Պտղավան

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **10**

Բնակիչների թիվը՝ **38**

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ծրագիրը՝

Աղբահանության կազմակերպում

Ծախսված գումարը՝ 480.0 հազ. ՀՀ դրամ

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված աղբահանության կազմակերպման ծրագիրը չի բավարարում բնապահպանական սուբվենցիաների տրամադրման համար օրենքով սահմանված պահանջները: Ուստի, **Պտղավան գյուղին հատկացված բնապահպանական սուբվենցիայի արդյունավետությունը 0% է:**

Որքանո՞վ են Պտղավան գյուղի բնակիչները տեղյակ իրենց տարածքի բարեարգման ծրագրերի մասին: Ունենալու համար հարցի պատասխանը հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Համայնքի բարեկարգման ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Պատասխանում թվարկած միջոցառումները ներառված են համայնքի պարտադիր խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում: Հարցման համաձայն բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված **աղբահանության կազմակերպման ոչ նպատակային ծրագրի արդյունքը հարցման մասնակիցների 100%-ի համար տեսանելի է, ուստի արդյունքը կարելի է բավարար համարել:**

Հարցման մասնակիցների 60%-ը դժվարացել են նշել ծրագրերն իրականացնողին, երեքի կարծիքով դա եղել է միջազգային կազմակերպություն, մնացած մասնակիցները դժվարացել են պատասխանել այդ հարցին:

Պարզելու համար, մտահոգու՞մ են արդյոք Դեբեդավան գյուղի բնակիչներին բնապահպանական ոլորտի խնդիրները, հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:

Բավարար՝ **70%**

Լավ՝ **30%**

Արդյո՞ք ստացված արձագանքի պատճառը բնության պահպանման աշխատանքների պատշաճ մակարդակն է: Հարցման մասնակիցների կարծիքն իմանալու նպատակով իրենց տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք բնության պահպանման աշխատանքները:



Ստացված պատկերը վկայում է, որ Պտղավան գյուղի բնական միջավայրի բավարար վիճակը պայմանավորված է բնության պահպանման աշխատանքների բավարար մակարդակով:

Պարզելու համար, թե բնապահպանության ոլորտում ի՞նչ խնդիրներ են մտահոգում Պտղավան գյուղի բնակիչներին, հարցման մասնակիցներին առաջարկվեց պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:

Անտառահատում՝ **30%**

Ոռոգման ջրի աղտոտում՝ **70%**

Ըստ պտղավան գյուղի հարցման մասնակիցների այս վնասակար մարդածին գործոնների ազդեցության արդյունքում վտանգված է իրենց առողջությունը:

Եզրակացություն. Պտղավան գյուղի ՏԻՄ-ը բնակիչներին մտահոգող մարդածին վնասակար գործոնների վտանգավոր ազդեցության դեմ պայքարելու փոխարեն նպատակային բնապահպանական սուբվենցիան ուղղել է սեփական լիազորությունների շրջանակում ներառված աղբահանության կազմակերպմանը:

գ.Զորական (Կողբ)

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **10**

Բնակիչների թիվը՝ **49**

ՏԻՄ-ի աշխատակազմի անդամ՝ 1

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ծրագիրը՝

Աղբահանության կազմակերպում

Ծախսված գումարը՝ 509.8 հազ. ՀՀ դրամ

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված աղբահանության կազմակերպման ծրագիրը չի բավարարում բնապահպանական սուբվենցիաների տրամադրման համար օրենքով սահմանված պահանջները: Հետևաբար, **Զորական գյուղին հատկացված բնապահպանական սուբվենցիայի արդյունավետությունը 0% է:**

Պարզելու համար, թե որքանո՞վ են գյուղի բնակիչները տեղյակ իրենց տարածքի բարեկարգման ծրագրերի մասին, հարցման մասնակիցներին առաջարկեցինք պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Համայնքի բարեկարգման ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Պատասխանում թվարկած միջոցառումները ներառված են համայնքի պարտադիր խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում: Հարցման մասնակիցների 70%-ը վկայում են, որ ծրագրերն իրականացվել են ՏԻՄ-ի ջանքերով, իսկ 3 մասնակից որպես ծրագրի իրականացնող ճանաչել են անհատ բարերարի, կամ բարեգործական կազմակերպություն:

Հարցման համաձայն բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված աղբահանության կազմակերպման ոչ նպատակային ծրագրի արդյունքը հարցման մասնակիցներից ոչ մեկի համար տեսանելի չէր: Ուստի հարկ ենք գտնում արձանագրել, որ **բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված աղբահանության կազմակերպման ոչ նպատակային ծրագրի արդյունավետությունը 0 է:**

Պարզելու համար, մտահոգու՞մ են արդյոք Զորական գյուղի բնակիչներին բնապահպանական ոլորտի խնդիրները, հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:



Արդյո՞ք ստացված արձագանքի պատճառը բնության պահպանման աշխատանքների ոչ պատշաճ մակարդակն է: Հարցման մասնակիցների կարծիքն իմանալու նպատակով իրենց տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք բնության պահպանման աշխատանքները:



Պարզելու համար, թե բնապահպանության ոլորտում մասնավորապես ի՞նչ խնդիրներ են մտահոգում բնակիչներին, հարցման մասնակիցներին առաջարկվեց պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:



Զորական գյուղի հարցման մասնակիցները գտնում են, որ թվարկած մարդածին գործոնների ազդեցության հետևանքները վատ են անդրադառնում առաջին հերթին իրենց առողջության վրա:

Եզրակացություն. Զորական գյուղի ՏԻՄ-ը բնակիչներին մտահոգող անտառահատման և հանքերի շահագործման արդյունքում առաջացող վնասակար ազդեցության դեմ պայքարելու փոխարեն նպատակային բնապահպանական սուբվենցիաներն ուղղում է սեփական լիազորությունների շրջանակում ներառված աշխատանքների կատարմանը:

Սյունիքի մարզ

ք.Ագարակ

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **10**

Բնակիչների թիվը՝ **48**

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ծրագիրը՝

1. **Կանաչ տարածքների ընդլայնում – 2010թ./ 1,070.0 հազ. ՀՀ դրամ**
2. **Ոռոգման համակարգի սպասարկման կազմակերպում – 2010 թ./ 1,029.0 հազ. ՀՀ դրամ**
3. Աջակցություն «Գիհոն» ԿԲՏ-ին բարեկարգման և կանաչապատման համար
4. Նոր զբոսայգու ցանկապատում
5. **Բնակչության բնապահպանական իրազեկության մակարդակի բարձրացում– 2010 թ./300.0 հազ. ՀՀ դրամ**

Ծախսված գումարը՝ 11,633.4 հազ. ՀՀ դրամ

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին բարեկարգման և կանաչապատման համար «Գիհոն» ԿԲՏ-ին աջակցությունը և զբոսայգու ցանկապատումը չեն բավարարում բնապահպանական սուբվենցիաների տրամադրման համար օրենքով սահմանված պահանջները: Այդ պահանջներին բավարարող «Ռոգման համակարգի սպասարկման կազմակերպում» և «բնակչությանը բնապահպանական իրազեկության մակարդակի բարձրացում» ծրագրերի վերաբերյալ հաշվարկի համաձայն **Ագարակ քաղաքին տրամադրված նպատակային բնապահպանական սուբվենցիաները կազմում են մասհանումների ընդհանուր գումարի 20.6%-ը, հետևաբար՝ դրանց արդյունավետությունը 20.6% է:**

Պարզելու համար, թե որքանո՞վ են Ագարակ քաղաքի բնակիչները տեղյակ իրենց տարածքի բարեկարգման ծրագրերից, հարցման մասնակիցներին առաջարկեցինք պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Համայնքի բարեկարգման ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Պատասխանում թվարկած միջոցառումներից միայն ծառատունկն է կարելի համարել իրականացված նպատակային բնապահպանական սուբվենցիայի հաշվին: Մնացած միջոցառումները ներառված են համայնքի պարտադիր խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում: Հարցման մասնակիցների 60%-ը վկայում են, որ դրանք իրականացվել են ՏԻՄ-ի ջանքերով, մնացածները դժվարացել են պատասխանել:

Հարցման համաձայն բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ռոգման համակարգի սպասարկման կազմակերպման նպատակային ծրագրի արդյունքը հարցման մասնակիցների համար տեսանելի չէր, իսկ բնակչության բնապահպանական իրազեկության մակարդակի բարձրացման ծրագրի արդյունքը մեր հարցման շրջանակում հնարավոր չէր գնահատել:

Կանաչ տարածքների ընդլայնման ծրագրի արդյունքը գնահատելու համար հարցման մասնակիցներին առաջարկեցինք պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքի կանաչապատման աշխատանքները:

Հարցման մասնակիցներից չորսի կարծիքով նման աշխատանքներ համայնքում չեն իրականացվում: Մնացածների կարծիքը բաշխվել է հետևյալ կերպ.



Կարելի է արձանագրել, որ **բնապահպանական սուբվենցիայի հաշվին կատարված** կանաչ **տարածքների ընդլայնման նպատակային ծրագրի արդյունքը հարցման մասնակիցները բավարար են գնահատում:**

Մեզ հետաքրքրում էր նաև բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ոռոգման համակարգի սպասարկման կազմակերպման ծրագրի արդյունքը:

Հարց՝ Գնահատե՛ք ոռոգման ջուր մատակարարող համակարգի վիճակը:



Հարցման մասնակիցներին խնդրել ենք պատասխանել հետևյալ հարցին ևս.

Հարց՝ Գնահատե՛ք մատակարարվող ոռոգման ջրի քանակը:



Ստացված պատասխանների համաձայն բնապահպանական սուբվենցիայի հաշվին ոռոգման համակարգի սպասարկման կազմակերպման նպատակային ծրագրի արդյունքը ևս կարելի է բավարար համրել:

Պարզելու համար, մտահոգու՞մ են արդյոք Ագարակ քաղաքի բնակիչներին բնապահպանական ոլորտի խնդիրները, հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:



Արդյո՞ք ստացված դրական արձագանքը պայմանավորված է բնության պահպանման աշխատանքների պատշաճ մակարդակով: Հարցման մասնակիցների կարծիքն իմանալու համար իրենց տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք բնության պահպանման աշխատանքները:



Բնության պահպանման աշխատանքները ևս բավարար են գնահատվել: Պարզելու համար, թե բնապահպանության ոլորտում կա՞ն արդյոք բնակիչներին մտահոգող խնդիրներ, հարցման մասնակիցներին առաջարկվեց պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:



Այսպիսին է Ագարակ քաղաքի բնակիչներին մտահոգող վնասակար մարդածին գործոնների ցանկը: Հարցման մասնակիցների 80%-ի համոզմամբ ազդեցության հետևանքները վատ են անդրադառնում առաջին հերթին իրենց առողջության վրա:

Եզրակացություն. Ագարակ քաղաքի ՏԻՄ-ը բնակիչներին մտահոգող մթնոլորտի և խմելու ջրի աղտոտման, հանքերի շահագործման հետ կապված թափոնների տեղադրման, անտառահատման ու հողատարման և հողերի դեգրադացիայի վնասաբեր ազդեցությունների դեմ պայքարելու փոխարեն նպատակային բնապահպանական սուբվենցիաների գերակշռող մասը՝ մոտ 80%-ը, ուղղում է իր անմիջական լիազորությունների շրջանակում ներառված խնդիրների լուծմանը:

գ.Կարճևան

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **10**

Բնակիչների թիվը՝ **37**

ՏԻՄ-ի աշխատակազմի անդամ՝ 1

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ծրագիրը՝

Խաղահրապարակի բարեկարգում

Ծախսված գումարը՝ 700.0 հազ. ՀՀ դրամ

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված խաղահրապարակի բարեկարգման ծրագիրը չի կարող բնապահպանական սուբվենցիաների տրամադրման համար օրենքով սահմանված պահանջները բավարարող համարվել: Արդյունքում ստիպված ենք արձանագրել, որ Կարճևան գյուղին **տրամադրված բնապահպանական սուբվենցիայի արդյունավետությունը 0% է:**

Պարզելու համար, թե տեղյա՞կ են արդյոք գյուղի բնակիչները իրենց տարածքի բարեարգման ծրագրերից, հարցման մասնակիցներին տրվել էր հետևյալ հարցը.

Հարց՝ Համայնքի բարեկարգման ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Պատասխանում թվարկած «Անտառի վերականգնում» միակ միջոցառումն է, որ ներառված չէ համայնքի պարտադիր խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում և միակ միջոցառումն է, որ կարող է բավարարել բնապահպանական սուբվենցիայի տրակադրման համար օրենքով սահմանված պահանջները: Հարցման մասնակիցների 60%-ը վկայում են, որ ծրագրերն իրականացվել են ՏԻՄ-ի ջանքերով: Մնացածները դժվարացել են նշել ծրագրերի իրականացնողին:

Հարցման ընթացքում փորձ է արվել պարզելու՝ մտահոգու՞մ են արդյոք Կարճևան գյուղի բնակիչներին բնապահպանական ոլորտի խնդիրները: Այդ նպատակով հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:



Կարճևան գյուղի բնական միջավայրի վիճակը բավարար համարելու համար հարցման մասնակիցները հիմք չեն տալիս: Արդյո՞ք ստացված արձագանքի պատճառը բնության պահպանման աշխատանքների ոչ պատշաճ մակարդակն է: Հարցման մասնակիցների կարծիքն իմանալու նպատակով իրենց տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք բնության պահպանման աշխատանքները:



Կարծիքները իրարամերժ են: Պարզելու համար, թե բնապահպանության ոլորտում ի՞նչ խնդիրներ են մտահոգում բնակիչներին, հարցման մասնակիցներին առաջարկվեց պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:



Կարճևան գյուղի հարցման մասնակիցների 80%-ի կարծիքով թվարկած մարդածին գործոնների ազդեցության հետևանքները վատ են անդրադառնում առաջին հերթին իրենց առողջության վրա:

Եզրակացություն. Կարճևան գյուղի ՏԻՄ-ը բնակիչներին մտահոգող մթնոլորտի և խմելու ջրի աղտոտման, հանքերի շահագործման հետ կապված թափոնների տեղադրման, հողատարման ու հողերի դեգրադացիայի արդյունքում առաջացող մարդկանց առողջության համար վնասակար ազդեցության դեմ միջոցներ ձեռնարկելու փոխարեն նպատակային բնապահպանական սուբվենցիաներն ուղղում է սեփական լիազորությունների շրջանակում ներառված աշխատանքների կատարմանը:

գ.Լեռնաձոր

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **10**

Բնակիչների թիվը՝ **37**

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ծրագիրը՝

1. **Սելավատարի մաքրում – 2016 թ./ 995.4 հազ. ՀՀ դրամ**
2. **Նոր սելավատարի կառուցում - 2016 թ./ 4,977.4 հազ. ՀՀ դրամ**

Ծախսված գումարը՝ 5,972.8 հազ. ՀՀ դրամ

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված այս ծրագրերը բավարարում են բնապահպանական սուբվենցիաների տրամադրման համար օրենքով սահմանված պահանջները: Ուստի անհրաժեշտ է արձանագրել, որ **Լեռնաձոր գյուղին տրամադրված նպատակային բնապահպանական սուբվենցիաները կազմում են մասհանումների ընդհանուր գումարի 100%-ը, հետևաբար դրանց արդյունավետությունը ևս 100% է:**

Պարզելու համար, թե տեղյա՞կ են արդյոք գյուղի բնակիչները իրենց տարածքի բարեարգման ծրագրերից, հարցման մասնակիցներին տրվել էր հետևյալ հարցը.

Հարց՝ Համայնքի բարեկարգման ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Հարցման մասնակիցների երկուսը վկայում են, որ ծրագրերն իրականացվել են ՏԻՄ-ի ջանքերով: Մնացածները դժվարացել են կամ հրաժարվել են նշել ծրագրերն իրկանացնեղին:

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված սելավատարի մաքրում և նոր սելավատարի կառուցում ծրագրերը բավարարում են բնապահպանական սուբվենցիայի տրակադրման համար օրենքով սահմանված պահանջները և բարեկարգման ծրագրերի շարքում հարցման մասնակիցների 10%-ի կողմից ըստ երևույթի նշված են որպես ջրահեռացում: Ուստի, կարող ենք եզրակացնել, որ **բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված սելավատարի մաքրում և նոր սելավատարի կառուցում նպատակային ծրագրերի արդյունզը հարցման մասնակիցների գնահատմամբ 10% է:**

Գյուղում գործող ջրահեռացման համակարգի վիճակի մասին ավելի մանրամասն տեղեկանալու նպատակով հարցման մասնակիցներին առաջարկվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք գյուղում գործող ջրահեռացման համակարգի վիճակը:

Հարցման մասնակիցների 10%-ի կարծիքով ջրահեռացման համակարգը բացակայում է: Մնացածների կարծիքները բաշխվեցին հետևյալ կերպ.



Մտահոգու՞մ են արդյոք Լեռնաձոր գյուղի բնակիչներին բնապահպանական ոլորտի խնդիրները: Հարցի պատասխանը ստանալու համար հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:



Լեռնաձոր գյուղի բնական միջավայրի վիճակը հարցման մասնակիցները բավարար համարելու հիմք չեն տալիս: Որքանո՞վ է ստացված արձագանքը արտացոլում բնության պահպանման աշխատանքների մակարդակը: Հարցման մասնակիցներին կարծիքն իմանալու նպատակով իրենց տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք բնության պահպանման աշխատանքները:



Գնահատականը գոհացուցիչ է: Պարզելու համար, կա՞ն արդյոք բնապահպանության ոլորտում Լոռնաձոր գյուղի բնակիչներին մտահոգող խնդիրներ: Պատասխանը ստանալու համար հարցման մասնակիցներին առաջարկվեց հետևյալ հարցին.

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:



Լեռնաձոր գյուղի բնակիչներին մտահոգող վնասակար գործոնները բազմաթիվ են և բազմազան: Հարցման մասնակիցների մեծամասնության կարծիքով դրանց բոլորի ազդեցությունը վատ է անդրադառնում առաջին հերթին իրենց առողջության վրա:

Եզրակացություն. Լեռնաձոր գյուղի ՏԻՄ-ը նպատակային սուբվենցիաներ ստանալու հնարավորությունն օգտագործել է տարածքի բնապահպանական բնույթի խնդիրների՝ սելավատարի մաքրման և նոր սելավատարի կառուցման համար:

գ.Սյունիք

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **10**

Բնակիչների թիվը՝ **36**

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ծրագիրը՝

1. **Ոռոգման ջրատարի մաքրում, նորոգում– 2012 թ./ 2,399.4 հազ. ՀՀ դրամ**
2. **Ոռոգման առվի մաքրում- 2013 թ./ 1,404.0 հազ. ՀՀ դրամ**
3. **Լոգերի մաքրում- 2015 թ./ 5,396.4 հազ. ՀՀ դրամ**

Ծախսված գումարը՝ 9,199.8 հազ. ՀՀ դրամ

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված երեք ծրագրերն էլ բավարարում են բնապահպանական սուբվենցիաների տրամադրման համար օրենքով սահմանված պահանջները: Ուստի, **Սյունիք գյուղին տրամադրված նպատակային բնապահպանական սուբվենցիաները կազմում են մասհանումների ընդհանուր գումարի 100%-ը և դրանց արդյունավետությունը 100% է:**

Որքանո՞վ են Սյունիք գյուղի բնակիչները տեղյակ իրենց տարածքի բարեկարգման ծրագրերի մասին: Պատասխանն ունենալու համար հարցման մասնակիցներին առաջարկեցինք պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Համայնքի բարեկարգման ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Հարցման մասնակիցների 50%-ի պնդմամբ իրենց համայնքում բարեկարգման որևէ ծրագիր չի իրականացվել, 30%-ը դժավարացել են պատասխանել հարցին, պատասխանում թվարկած բոլոր միջոցառումները ներառված են համայնքի պարտադիր խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում, բայց հարցման մասնակիցները խուսափել են անվանել ծրագրերն իրականացնողին:

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված ոռոգման ջրատարի մաքրման և նորոգման, ոռոգման առվի և լոգերի մաքրման նպատակային ծրագրերը հարցման մասնակիցների կողմից վերը թվարկած միջոցառումների շարքում չեն հիշատակվել, ուստի կարելի է եզրակացնել, որ դրանց արդյունքը իրենց համար տեսանելի չէ:

Այդ գնահատականը հիմնավորելու կամ հերքելու նպատակով հարցման մասնակիցներին տրվել էր հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք ոռոգման ջուր մատակարարող համակարգի վիճակը:

Հարցման մասնակիցներից մեկի կարծիքով ոռոգման ջուր մատակարարող համակարգ գոյություն չունի, իսկ մնացած մասնակիցների պատասխանները հետևյալն էին.



Հարցման մասնակիցներին առաջարկել ենք նաև **գնահատել մատակարարվող ոռոգման ջրի քանակը** և ստացել ենք հետևյալ պատկերը.

Հարցման մասնակիցներից մեկի կարծիքով ոռոգման ջուր չի մատակարարվում, իսկ մնացածների գնահատականները հետևյալն են.



Ստացված պատկերը գալիս է հաստատելու վերը բերված եզրահանգումը առ այն, որ բնապահպանական սուբվենցիաների հաշվին կատարված ոռոգման կարգավորմանն ուղղված նպատակային ծրագրերի արդյունքը Սյունիք գյուղի բնակիչների համար տեսանելի չէ:

Պարզելու համար, մտահոգու՞մ են արդյոք Սյունիք գյուղի բնակիչներին բնապահպանական ոլորտի խնդիրները, հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:



Դատելով ստացված արդյունքից, Սյունիք գյուղի բնական միջավայրի վիճակը բարվոք համարել չի կարելի: Արդյո՞ք դա պայմանավորված է բնության պահպանման աշխատանքների ոչ պատշաճ մակարդակով: Հարցման մասնակիցների կարծիքն իմանալու համար, իրենց տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք բնության պահպանման աշխատանքները:



Հարցման մասնակիցների պատասխանները վկայում են բնության պահպանման աշխատանքների բացակայության կամ անարդյունավետության մասին: Պարզելու համար, թե բնապահպանության ոլորտում ի՞նչ խնդիրներ են մտահոգում Սյունիք գյուղի բնակիչներին, հարցման մասնակիցներին առաջարկվեց պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:



Սյունիք գյուղի բնակիչներին մտահոգող վնասակար մարդածին գործոնների շարքում ամենահաճախ հիշատակվողը խմելու ջրի աղտոտման երևույթն է, որի հետևանքները, ի թիվս այլոց, հարցման մասնակիցների 70%-ի համոզմամբ վատ են անդրադառնում առաջին հերթին իրենց առողջության վրա:

Եզրակացություն. Սյունիք գյուղի ՏԻՄ-ը՝ հաշվի առնելով բնակիչներին մտահոգող ոռոգման ջրի աղտոտման երևույթը նպատակային բնապահպանական սուբվենցիաներն առաջին հերթին ուղղել է ոռոգման ենթակառուցվածքների մաքրմանը ու նորոգմանը:

ք.Կապան

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **60**

Բնակիչների թիվը՝ **185**

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ծրագիրը՝

1. **Ողջի գետի հունի մաքրման աշխատանքներ – 2009թ./ 12,996.6 հազ. ՀՀ դրամ**
2. **Սեպտիկ թափոնների և սրածայրերի թաղման փոսի կառուցում – 2010թ./ 2,982.2 հազ. ՀՀ դրամ**
3. Մանուկյան փողոցի մայթերի վերանորոգման, բարեկարգման և ծառատնկման աշխատանքներ
4. Մանուկյան փողոցի մայթերի ծառատնկման, կանաչ տարածքների վերականգնման, բարեկարգման և վերանորոգման աշխատանքներ

Ծախսված գումարը՝ 78,122.2 հազ. ՀՀ դրամ

Բնապահպանական սուբվենցիայների հաշվին իրականացված **գետի հունի մաքրման և սեպտիկ թափոնների ու սրածայրերի թաղման փոսի կառուցում** ծրագրերը լիովին բավարարում են բնապահպանական սուբվենցիաների տրամադրման համար օրենքով սահմանված պահանջները: Ուստի **Կապան քաղաքին տրամադրված նպատակային բնապահպանական սուբվենցիաները կազմում են մասհանումների ընդհանուր գումարի 20%-ը, հետևաբար բնապահպանական սուբվենցիաների արդյունավետությունը 20% է:**

Պարզելու համար, տեղյա՞կ են արդյոք թե Կապան քաղաքի, թե Սյունիք գյուղի բնակիչները իրենց տարածքի բարեարգման ծրագրերի մասին, հարցման մասնակիցներին առաջարկեցինք պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Համայնքի բարեկարգման ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Պատասխանում թվարկած բոլոր միջոցառումները ներառված են համայնքի պարտադիր խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում:

«**Ըստ Ձեզ, ու՞մ կողմից են իրականացվել այդ ծրագրերը**» հարցին պատասխանած մասնակիցները իրականացնողների շարքում նշել են հետևյալ կառույցները.



Հարցման տվյալների համաձայն բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված գետի հունի մաքրման և սեպտիկ թափոնների ու սրածայրերի թաղման փոսի կառուցման նպատակային ծրագրերը հարցման մասնակիցների կողմից վերը թվարկած միջոցառումների շարքում չեն հիշատակվել, ուստի կարելի է եզրակացնել, որ դրանց արդյունքը իրենց համար տեսանելի չէ:

Պարզելու համար, ինչպիսի՞ն է Կապան քաղաքի բնակիչների կարծիքով իրենց տարածքը բնապահպանական խնդիրների տեսանկյունից, հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:



Արդյո՞ք ստացված արձագանքը պայմանավորված է բնության պահպանման աշխատանքների պատծաճ մակարդակով: Հարցման մասնակիցների կարծիքն իմանալու համար իրենց տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք բնության պահպանման աշխատանքները:



Իսկ բնապահպանության ոլորտում ի՞նչ խնդիրներ են մտահոգում Կապան քաղաքի բնակիչներին:

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:



Տրամաբանական է, որ Կապան քաղաքի հարցման մասնակիցներին առաջին հերթին և առավելապես մտահոգում են հանքերի շահագործման հետ կապված խնդիրները: 70%-ի համոզմամբ թվարկած

մարդածին գործոնների ազդեցության հետևանքները վատ են անդրադառնում առաջին հերթին իրենց առողջության վրա:

Եզրակացություն. Կապան քաղաք ՏԻՄ-ը՝ որոշ չափով հաշվի առնելով բնակիչներին մտահոգող հանքերի շահագործման և դրա հետ կապված թափոնների տեղադրման վնասաբեր երևույթները, նպատակային բնապահպանական սուբվենցիաների 20%-ը ուղղել է գետի հունի մաքրման և սեպտիկ թափոնների ու սրածայրերի թաղման փոսի կառուցման նպատակներին: Մնացած 80%-ի հաշվին իրականացվել են ՏԻՄ-ի սեփական լիզորությունների շրջանակում ընդգրկված միջոցառումներ:

ք.Քաջարան

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **20**

Բնակիչների թիվը՝ **70**

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ծրագիրը՝

1. Ծառատունկ, ծառերի խնամք
2. **Խմելու ջրի ֆտորացման աշխատանքներ - 2005թ., 2006թ.**
3. **Շրջակա բնության տվյալների հավաքում և համակարգում** - 2005թ., 2006թ., 2007թ.
4. **Էկոլոգիական իրավիճակի հետազոտում - 2005թ., 2006թ.**
5. **Գրքույկի տպագրում** - 2006թ., 2010թ.
6. **Մթնոլորտի աղտոտվածության հետազոտություն** - 2007թ.
7. **"Բնության թանգարան-էկոկենտրոն" ստեղծում, գործունեության ապահովում - 2007թ., 2009թ., 2010թ.**
8. **Կանանչ տարածքների վերականգնում և ընդլայնում - 2007թ., 2008թ., 2009թ., 2013թ., 2014թ., 2015թ.**
9. **GIS համակարգի ստեղծում, տվյալների թարմացում** - 2008թ., 2009թ.
10. **Էկոլոգիական կրթություն և դաստիրակություն** - 2008թ., 2013թ., 2014թ., 2016թ.
11. **Լաբ.սարքավորումների, գույքի, քիմիական նյութերի ձեռքբերում** - 2008թ.
12. **Լաբ.տարածքի ներքին հարդարման աշխատանքներ** - 2008թ.
13. **Կանանչ տարածքների ոռոգման համակարգի ընդլայնում** - 2009թ.
14. Ջրցան մեքենայի ձեռքբերում
15. **Աջակցություն բնապահպանական «Կենի» հասարակական կազմակերպությանը** - 2009թ., **2010թ., 2013թ.**
16. **Կենսաբազմազանության ուսումնասիրում և գնահատում** - 2009թ., 2010թ., 2013թ.
17. Մանկապարտեզում արևային ջրատաքացուցչի տեղադրում
18. **Էկոլոգիայի դասասենյակի ստեղծում - 2010թ.**
19. **Ուսումնական նյութերի և տեխնիկական միջոցների ձեռքբերում - 2010թ.**
20. Կեղտաջրերի մաքրման կայանի նախագծի մշակում
21. **Էկոլոգիական կրթություն, տեղեկատվություն, իրազեկում - 2007թ., 2008թ., 2013թ., 2014թ., 2015թ., 2016թ.**
22. Մանկապարտեզի բակի կանաչապատման պլանավորում
23. **Բնապահպանական գրականության ձեռքբերում** - 2010թ.
24. **Շրջակա միջավայրի աղտոտվածության հետազոտություն - 2010թ.**
25. Քաղաքապետարանի աշխատակազմի վերապատրաստում
26. Փոշեհավաք մեքենայի ձեռքբերում

Ծախսված գումարը՝ 189,498.8 հազ. ՀՀ դրամ

Բնապահպանական սուբվենցիայների հաշվին իրականացված հետևյալ ծրագրերը՝ ծառատունկ, ծառերի խնամք, ջրցան մեքենայի ձեռքբերում, մանկապարտեզում արևային ջրատաքացուցչի տեղադրում, քաղաքապետարանի աշխատակազմի վերապատրաստում և փոշեհավաք մեքենայի ձեռքբերում, չեն բավարարում բնապահպանական սուբվենցիաների տրամադրման համար օրենքով սահմանված պահանջները և դրանց ուղղված ծախսերը չեն կարող նպատակային համարվել: Հետևաբար, **Քաջարան քաղաքին տրամադրված նպատակային բնապահպանական սուբվենցիաները կազմում են**

մասհանումների ընդհանուր գումարի 60%-ը և բնապահպանական սուբվենցիաների արդյունավետությունը կազմում է 60%:

Հարկ է նշել սակայն, որ իրականացված բնապահպանական ծրագրերի արդյունքը՝ դրանց բնույթից ելնելով, հանրության համար տեսանելի լինել չի կարող և, հետևաբար, անվերահսկելի է: Դա են վկայում նաև ստորև բնակիչների շրջանում իրականացված հարցման արդյունքները:

Հարց՝ Համայնքի բարեկարգման ինչ՞ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Պատասխանում թվարկած միջոցառումները ներառված են համայնքի պարտադիր խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում: Հարցման մասնակիցների 75%-ը ծրագրերն իրականացնող են ճանաչել ՏԻՄ-ը: Նշվել են նաև Քաջարանի կոմբինատը և անհատ բարերար, բարեգործական կազմակերպություն տարբերակները:

Հարցման տվյալների համաձայն բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված նպատակային ծրագրերը հարցման մասնակիցների կողմից վերը թվարկած միջոցառումների շարքում չեն հիշատակվել, ինչը հաստատում է մեր ենթադրությունը, որ դրանց արդյունքը համայնքի բնակչության համար տեսանելի չէ:

Իսկ ի՞նչ կարծիքի են Կապան քաղաքի բնակիչները իրենց տարածքին բնորոշ բնապահպանական խնդիրների մասին: Պատասխանն իմանալու համար հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:



Արդյո՞ք ստացված դրական արձագանքը պայմանավորված է բնության պահպանման աշխատանքների պատշաճ մակարդակով: Հարցման մասնակիցների կարծիքն իմանալու համար իրենց տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք բնության պահպանման աշխատանքները:



Բնության պահպանման աշխատանքները ևս բավարար են գնահատվել:

Պարզելու համար, կա՞ն արդյոք և ի՞նչ բնապահպանության խնդիրներ են մտահոգում Քաջարան քաղաքի բնակիչներին: Հարցման մասնակիցներին առաջարկվեց պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:



Տրամաբանական է, որ Քաջարան քաղաքի հարցման մասնակիցներին առաջին հերթին և առավելապես մտահոգում են հանքերի շահագործման և դրա հետ կապված մթնոլորտի, խմելու և ոռոգման ջրի աղտոտման, թափոնների տեղադրման խնդիրները և որ նրանց 85%-ի համոզմամբ թվարկած մարդածին գործոնների վնասաբեր ազդեցության հետևանքները վատ են անդրադառնում առաջին հերթին իրենց առողջության վրա:

Եզրակացություն. Քաջարան քաղաքի ՏԻՄ-ը՝ հաշվի առնելով բնակիչներին մտահոգող բնապահպանական խնդիրները նպատակային բնապահպանական սուբվենցիաների 60%-ը ուղղել է ոլորտի ուսումնասիրման, հետազոտման և համայնքի անդամների իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակներին: Ցավոք, ներկայացվող ուսումնասիրության շրջանակում նման աշխատանքների արդյունքը գնահատելու հնարավորություն նախատեսված չի եղել:

Լոռու մարզ

ք. Ախթալա

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **10**

Բնակիչների թիվը՝ **28**

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ծրագիրը՝

1. Փողոցի ասֆալտապատում – 2010թ.
2. **Կանաչապատ տարածքի վերականգնում – 2011թ./700 հազ. ՀՀ դրամ**
3. ՀՈԱԿ-ի ջեռուցման համակարգի կառուցում – 2012թ.
4. Մանկապարտեզների, խաղահրապարակների կառուցում, նորոգում – 2013թ.
5. Մարզահրապարակի կառուցում- 2014թ.

Ծախսված գումարը՝ 12,317.2 հազ. ՀՀ դրամ

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված ծրագրերից միայն կանաչապատ տարածքների վերականգնումն է բավարարում բնապահպանական սուբվենցիաների տրամադրման համար օրենքով սահմանված պահանջները: Մնացած ծրագրերը ներառված են համայնքի պարտադիր խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում և այդ ծրագրերին ուղղված ծախսերը չեն կարող նպատակային համարվել: Արդյունքում, **բյուջեից բնապահպանական սուբվենցիաների տեսքով հատկացումների արդյունավետությունը 5.7% է:**

Հետաքրքիր էր պարզել, տեսանելի՞ են արդյոք Ախթալա քաղաքի բնակիչների համար բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված ոչ նպատակային ծրագրերի արդյունքները:

Հարց՝ Համայնքի բարեկարգման ինչ՞ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Թվարկած միջոցառումներից ոչ բոլորն են ներառված համայնքի պարտադիր խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում: Հարցման մասնակիցները գրեթե միաձայն ծրագրերն իրականացնող են ճանաչել ՏԻՄ-ը: Քանի որ ծառատունկն ու անտառի վերականգնումը նշել են հարցման մասնակիցների համապատասխանաբար 40 և 10%-ը, կարող ենք եզրակացնել, որ **նպատակային բնապահպանական սուբվենցիայի արդյունքը Ախթալա քաղաքի բնակիչների համար տեսանելի է:**

Իսկ կա՞ն արդյոք Ախթալա քաղաքի բնակիչների համար տեսանելի բնապահպանական խնդիրներ: Պատասխանն իմանալու համար հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:



Արդյո՞ք բավարար գնահատականը պայմանավորված է բնության պահպանման աշխատանքների պատշաճ մակարդակով: Հարցման մասնակիցների կարծիքն իմանալու համար իրենց տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք բնության պահպանման աշխատանքները:



Պատասխանները հաստատեցին մեր ենթադրությունը:

Բնապահպանության ոլորտում Ախթալա քաղաքի բնակիչներին մտահոգող երևույթների մասին պատկերացում ունենակու նպատակով հարցման մասնակիցներին առաջարկվեց պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:



Տրամաբանական է, որ Ախթալա քաղաքի հարցման մասնակիցներին առավելապես մտահոգում են հանքերի շահագործումն և դրա հետ կապված թափոնների տեղադրման խնդիրները և այն, որ նրանց համոզմամբ թվարկած մարդածին գործոնների վնասաբեր ազդեցության հետևանքները վատ են անդրադառնում առաջին հերթին իրենց առողջության վրա:

Եզրակացություն. Ախթալա քաղաքի ՏԻՄ-ը բավարար չափով հաշվի չի առնում բնակիչներին մտահոգող բնապահպանական խնդիրները և նպատակային բնապահպանական սուբվենցիաները հիմնականում ուղղում է իր լիազորությունների շրջանակում ներառված համայնքի պարտադիր խնդիրների լուծմանը:

գ.Մեծ Այրում

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **10**

Բնակիչների թիվը՝ **42**

ՏԻՄ-ի աշխատակազմի անդամ՝ 1

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ծրագիրը՝

Աղբահանության կազմակերպում – 2017 թ.

Ծախսված գումարը՝ 416.4 հազ. ՀՀ դրամ

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված աղբահանության կազմակերպման ծրագիրը չի բավարարում բնապահպանական սուբվենցիաների տրամադրման համար օրենքով սահմանված պահանջները: Հետևաբար, **Մեծ Այրում գյուղին տրամադրված բնապահպանական սուբվենցիաների արդյունավետությունը 0% է:**

Պարզելու համար, թե որքանո՞վ են գյուղի բնակիչները տեղյակ իրենց տարածքի բարեկարգման ծրագրերի մասին, հարցման մասնակիցներին առաջարկեցինք պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Համայնքի բարեկարգման ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Պատասխանում թվարկած միջոցառումները մեծամասամբ ներառված են համայնքի պարտադիր խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում: Հարցման մասնակիցների 80%-ը վկայում են, որ ծրագրերն իրականացվել են ՏԻՄ-ի ջանքերով, 3 մասնակից որպես ծրագրերի իրականացնող ճանաչել են անհատ բարերարի, կամ բարեգործական կազմակերպություն և միջազգային կազմակերպություն:

Ստացված արդյունքի համաձայն բնապահպանական սուբվենցիայի հաշվին կատարված աղբահանության կազմակերպման ոչ նպատակային ծրագրի արդյունքը հարցման մասնակիցների 80%-ի համար տեսանելի է:

Պարզելու համար, մտահոգու՞մ են արդյոք **Մեծ Այրում** գյուղի բնակիչներին բնապահպանական ոլորտի խնդիրները, հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:



Արդյո՞ք ստացված դրական արձագանքի պատճառը բնության պահպանման աշխատանքների որակն է: Հարցման մասնակիցների կարծիքն իմանալու նպատակով իրենց տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք բնության պահպանման աշխատանքները:



Արդյունքը գոհացուցիչ է, մեր ենթադրությունը հաստատվեց: Սակայն այս ոլորտում ի՞նչ խնդիրներ են մտահոգում բնակիչներին: Պատասխանն իմանալու համար հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:



Մեծ Այրում գյուղի հարցման մասնակիցների 72%-ին մտահոգում է մթնոլորտի աղտոտումը և 80%-ի կարծիքով թվարկած մարդածին գործոնների ազդեցության հետևանքները վատ են անդրադառնում առաջին հերթին իրենց առողջության վրա:

Եզրակացություն. Մեծ Այրում գյուղի ՏԻՄ-ը բնակիչներին մտահոգող մթնոլորտի, խմելու և ոռոգման ջրի աղտոտման, թափոնների տեղադրման վնասակար ազդեցության դեմ պայքարելու փոխարեն նպատակային բնապահպանական սուբվենցիան ուղղել է սեփական լիազորությունների շրջանակում ներառված աղբահանության կազմակերպմանը:

գ.Շնող

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **10**

Բնակիչների թիվը՝ **22**

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ծրագիրը՝
Հեղեղատարների մաքրում – 2017 թ./ 1,500.0 հազ. ՀՀ դրամ

Ծախսված գումարը՝ 1,500.0 հազ. ՀՀ դրամ

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված հեղեղատարների մաքրում ծրագիրը լիովին բավարարում է բնապահպանական սուբվենցիաների տրամադրման համար օրենքով սահմանված պահանջները: Կարող ենք արձանագրել, որ **Շնող գյուղին տրամադրված նպատակային բնապահպանական սուբվենցիայի արդյունավետությունը 100% է:**

Պարզելու համար, թե որքանո՞վ են գյուղի բնակիչները տեղյակ իրենց տարածքի բարեարգման ծրագրերի մասին, հարցման մասնակիցներին առաջարկեցինք պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Համայնքի բարեկարգման ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Պատասխանում թվարկած միջոցառումները՝ բացառությամբ անտառի վերականգնում ծրագրի, ներառված են համայնքի պարտադիր խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում: Հարցման մասնակիցների 70%-ը վկայում են, որ ծրագրերն իրականացվել են ՏԻՄ-ի ջանքերով, 4 մասնակից որպես ծրագրերի իրականացնող ճանաչել են անհատ բարերարի, կամ բարեգործական կազմակերպություն:

Հարցման համաձայն բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված հեղեղատարների մաքրում նպատակային ծրագրի արդյունքը հարցման մասնակիցների 40%-ի համար տեսանելի էր, որպես ջրահեռացման կազմակերպման ծրագիր:

Պարզելու համար բնակիչների կարծիքը գյուղի գործող ջրահեռացման համակարգի վիճակի մասին, հարցման մասնակիցներին առաջարկեցինք պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Գնահատե՛ք ջրահեռացման համակարգի վիճակը:

Հարցման մասնակիցներից մեկի կարծիքով ջրահեռացման համակարգը բացակայում է, 20%--ի կարծիքով համակարգի վիճակը բավարար է, մնացածները դժվարացել են պատասխանել:

Ստացված արդյունքի համաձայն բնապահպանական սուբվենցիայի հաշվին հեղեղատարների մաքրման նպատակային ծրագրի արդյունքի մասին բնակիչների կարծիքը միանշանակ չէ:

Պարզելու համար, մտահոգու՞մ են արդյոք **Մեծ Այրում** գյուղի բնակիչներին բնապահպանական ոլորտի խնդիրները, հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:



Արդյո՞ք ստացված դրական գնահատականի հիմքում բնության պահպանման աշխատանքների որակն է: Հարցման մասնակիցների կարծիքն իմանալու նպատակով իրենց տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք բնության պահպանման աշխատանքները:



Արդյունքը զոհացուցիչ է: Իսկ բնապահպանական ոլորտում ի՞նչ խնդիրներ են մտահոգում Շնող գյուղի բնակիչներին:

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:



Շնող գյուղի հարցման մասնակիցների 60%-ը չի տեսնում իրենց տարածքին վնասող որևէ մարդածին վնասակար գործոն, իսկ ինչ վերաբերում է նկատված վնասակար գործոններին, ապա 40%-ը գտնում է, որ դրանց ազդեցության հետևանքները վատ են անդրադառնում իրենց առողջության վրա:

Եզրակացություն. Շնող գյուղի ՏԻՄ-ը, համայնքի համար բնորոշ խնդիրներից ելնելով, նպատակային բնապահպանական սուբվենցիան ուղղել է հեղեղատարների մաքրմանը:

գ. Հազվի

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **10**

Բնակիչների թիվը՝ **27**

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ծրագիրը՝

1. Օձուն-Հազվի ճանապարհի ասֆալտապատում, բարեկարգում – 2011թ.
2. Միջհամայնքային ճանապարհի ասֆալտապատում - 2012թ., 2013թ., 2014թ.
3. Գազաֆիկացում - 2013թ.
4. **Հակակարկտային համակարգի տեղադրում - 2013թ./ 5,500.0 հազ.ՀՀ դրամ**
5. Միջհամայնքային և գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատում - 2017թ.

Ծախսված գումարը՝ 115,027.3 հազ. ՀՀ դրամ

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված ծրագրերը՝ բացառությամբ հակակարկտային համակարգի տեղադրումը, չեն բավարարում բնապահպանական սուբվենցիաների տրամադրման համար օրենքով սահմանված պահանջները: Դրանք ներառված են համայնքի պարտադիր խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում: Ուստի, այդ ծրագրերին ուղղված ծախսերը չեն կարող նպատակային համարվել: Այլ է հակակարկտային համակարգի տեղադրման ծրագրի դեպքը: Այն կարելի է նպատակային համարվել: Արդյունքում, **Հագվի գյուղին տրամադրված նպատակային բնապահպանական սուբվենցիաները կազմում են մասհանումների ընդհանուր գումարի 5%-ը:**

Հետաքրքիր էր պարզել, տեսանելի՞ են արդյոք Հագվի գյուղի բնակիչների համար բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված ծրագրերի արդյունքները:

Հարց՝ Համայնքի բարեկարգման ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Անտառի վերականգնում, ծառատունկ և կարկտակայանի տեղադրում ծրագրերից բացի մնացած միջոցառումները ներառված են համայնքի պարտադիր խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում և հարցման մասնակիցները դրանց իրականացնող են ճանաչել ՏԻՄ-ը: Ինչ վերաբերվում է անտառի վերականգնում, ծառատունկ և կարկտակայանի տեղադրում ծրագրերին, ապա դրանք, ըստ հարցման մասնակիցների, իրականացվել են անհատ բարերարի կամ բարեգործական կազմակերպության ջանքերով: Այնուամենայնիվ, **կարկտակայանի տեղադրման ծրագիրը նշվել է հարցման մասնակիցների կողմից և տված արդյունքը կարող է 100% համարվել**:

Իսկ կա՞ն արդյոք Հագվի գյուղի բնակիչների համար տեսանելի իրենց տարածքին բնորոշ բնապահպանական խնդիրներ: Պատասխանն իմանալու համար հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:



Արդյո՞ք ստացված արձագանքը պայմանավորված է բնության պահպանման աշխատանքների պատշաճ մակարդակով: Հարցման մասնակիցների կարծիքն իմանալու համար իրենց տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՝ք բնության պահպանման աշխատանքները:



Արդյունքը միանշանակ գոհացուցիչ է: Պարզելու համար, թե բնապահպանության ոլորտում ի՞նչ խնդիրներ են մտահոգում Հագվի գյուղ բնակիչներին, հարցման մասնակիցներին առաջարկվեց պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:



Ըստ ստացված արդյունքի Հագվի գյուղի հարցման մասնակիցների 50%-ը գտնում են, որ իրենց բանակավայրի վրա մտահոգություն առաջացնող գործոններ չեն ազդում: Ոմանց մտահոգում է մթնոլորտի և որոշ չափով նաև խմելու ջրի աղտոտման խնդիրը: Իրենց համոզմամբ այդ մարդածին գործոնների վնասաբեր ազդեցության հետևանքները վատ են անդրադառնում առաջին հերթին մարդու առողջության վրա:

Եզրակացություն. Հագվի գյուղի ՏԻՄ-ը՝ հաշվի չառնելով բնակիչներին մտահոգող բնապահպանական բնույթի խնդիրները, նպատակային բնապահպանական սուբվենցիաների 95%-ը ուղղել է իր լիազորությունների շրջանակում ներառված համայնքի պարտադիր խնդիրների լուծմանը:

գ.Հաղպատ

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **10**

Բնակիչների թիվը՝ **39**

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ծրագիրը՝

1. **Ծառատունկ – 2005թ., 2007թ./ 3,709.9 հազ. ՀՀ դրամ**
2. **Տնկարանի հիմնում – 2008թ./ 2,960.0 հազ. ՀՀ դրամ**
3. **Սելավատարների մաքրում, նորոգում - 2007թ./ 1,098.2 հազ. ՀՀ դրամ**
4. Գազաֆիկացման ներքին ցանցի բարելավում
5. Աղբահանության կազմակերպում
6. Կենցաղային թափոնների աղբարկղերի ձեռքբերում
7. Ճանապարհների բարեկարգում, սելավատարների նորոգում
8. **Ջրամբարի վերանորոգում – 2012թ./ 4,363.8 հազ. ՀՀ դրամ**
9. Խմելու ջրի ներքին ցանցի կառուցում
10. Աղբահանության կազմակերպում

Ծախսված գումարը՝ 112,726.6 հազ. ՀՀ դրամ

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված նպատակային ծրագրերն են ծառատունկը, տնկարանի հիմնումը, սելավատարների մաքրումն ու նորոգումը և ջրամբարի վերանորոգումը, որոնք բավարարում են բնապահպանական սուբվենցիաների տրամադրման համար օրենքով սահմանված պահանջները: Մնացած վեց ծրագրերը ներառված են համայնքի պարտադիր

խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում և դրանց ուղղված ծախսերը չեն կարող նպատակային համարվել: **Ուստի, Հաղպատ գյուղին հատկացված նպատակային բնապահպանական սուբվենցիաները կազմում են մասհանումների ընդհանուր գումարի 10.8%-ը, հետևաբար բնապահպանական սուբվենցիաների արդյունավետությունը 10.8% է:**

Հետաքրքիր էր պարզել, տեսանելի՞ են արդյոք Հաղպատ գյուղի բնակիչների համար բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված նպատակային ծրագրերի արդյունքները:

Հարց՝ Համայնքի բարեկարգման ինչ՞ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Ծառատնկման և անտառի վերականգնման աշխատանքներից բացի մնացած միջոցառումները ներառված են համայնքի պարտադիր խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում: Դրանք իրականացնողին դժվարացել են նշել հարցման մասնակիցների 60%-ը և միայն 30%-ի կարծիքով դրանք իրականացնողը ՏԻՄ-ն է եղել: Ինչ վերաբերվում է բնապահպանական սուբվենցիայի հաշվին 2005թ.-ին և 2007թ.-ին իրականացված ծառատնկման և 2008-ին տնկարանի հիմնման ծրագրերին, ապա դրանք **կարող են արդյունք տված համարվել** չնայած, որ հիշատակվել են հարցման մասնակիցների համապատասխանաբար ընդմանեը 20 և 10%-ի կողմից:

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին 2007թ.-ին իրականցված «Սելավատարների մաքրում, նորոգում» ծրագրի արդյունքը գնահատելու համար մենք խնդրել էինք Հաղպատ գյուղի հարցման մասնակիցներին գնահատել ջրահեռացման համակարգի վիճակը: **Հարցման մասնակիցների 100%-ի կարծիքով համակարգը բացակայում է, հետևաբար բացակայում է նաև այդ ծարագրի արդյունքը**:

Կա՞ն արդյոք Հաղպատ գյուղի բնակիչների համար տեսանելի իրենց տարածքին բնորոշ բնապահպանական խնդիրներ: Պատասխանն իմանալու համար հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:



Արդյո՞ք ստացված դրական արձագանքը պայմանավորված է բնության պահպանման աշխատանքների պատշաճ մակարդակով: Հարցման մասնակիցների կարծիքն իմանալու համար իրենց տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՝ք բնության պահպանման աշխատանքները:



Արդյունքը ամենևին էլ գոհացուցիչ չէ: Պարզելու համար, թե բնապահպանության ոլորտում ի՞նչ խնդիրներ են մտահոգում Հաղպատ գյուղի բնակիչներին, հարցման մասնակիցներին առաջարկվեց պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:



Ըստ ստացված արդյունքի, Հաղպատ գյուղի հարցման մասնակիցները միաձայն գտնում են, որ իրենց բնակավայրի վրա մտահոգություն առաջացնող գործոններից ամենավտանգավորը մթնոլորտի աղտոտումն է: Իրենց անհանգստացնում են նաև հանքերի շահագործումն ու թափոնների տեղադրումը, որոնք վատ են անդրադառնում առաջին հերթին իրենց առողջության վրա և պատճառում են նյութական վնասներ:

Համադրելով Հաղպատ գյուղի բնակիչներին մտահոգող բնապահպանական բնույթի խնդիրները բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված ծրագրերի հետ, ստիպված ենք արձանագրել, որ ՏԻՄ-ը հաշվի չի առել բնակչության կարծիքը և նպատակային բնապահպանական սուբվենցիաների 90%-ը ուղղել է սեփական լիազորությունների շրջանակում ներառված խնդիրների լուծմանը:

գ.Աքորի

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **10**

Բնակիչների թիվը՝ **30**

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ծրագիրը՝

1. **Տնկարանի հիմնում – 2007թ., 2010-2015թթ./ 92,105.6 հազ.ՀՀ դրամ**
2. **Ոռոգման ջրագծի կառուցում – 2007-2009թթ., 2012թ., 2014թ., 2015թ./ 20,788.6 հազ.ՀՀ դրամ**
3. **Հեղեղատարի մաքրում և կառուցում - 2008թ., 2009թ. 2012թ., 2013թ./ 17,655.8 հազ.ՀՀ դրամ**
4. Ջրօգտագործման ծախսերի մասնակի մարում
5. Նախագծային հաշվարկ
6. Նախագծի փորձարկում
7. Ֆուտբոլի դաշտի ցանկապատում
8. Փողոցների բարեկարգում, ջրահեռացում, ասֆալտապատում
9. Մանկապարտեզի լուսամուտների և դռների փոխում
10. Ամբուլատորիայի տանիքի վերանորոգում
11. Երաժշտական դպրոցի գույքի ձեռքբերում
12. Առողջության պահպանման կենտրոնի նորոգում
13. **Կենսաքիմիական անալիզատորի ձեռքբերում – 2015թ./ 760.0 հազ.ՀՀ դրամ**

14. Փողոցների ասֆալտապատում
15. **Ոռոգման ջրագծի հիմնանորոգում – 2017թ./ 4,000.0 հազ.ՀՀ դրամ**

Ծախսված գումարը՝ 268,639.6 հազ. ՀՀ դրամ

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված նպատակային ծրագրերն են.

1. **Տնկարանի հիմնում,**
2. **Ոռոգման ջրագծի կառուցում,**
3. **Հեղեղատարի մաքրում և կառուցում,**
4. **Կենսաքիմիական անալիզատորի ձեռքբերում,**
5. **Ոռոգման ջրագծի հիմնանորոգում,**

Դրանք բավարարում են բնապահպանական սուբվենցիաների տրամադրման համար օրենքով սահմանված պահանջները: Մնացած աշխատանքները ներառված են համայնքի պարտադիր խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում և այդ ծրագրերին ուղղված ծախսերը չեն կարող նպատակային համարվել: **Ուստի, Աքորի գյուղին հատկացված նպատակային բնապահպանական սուբվենցիաները կազմում են մասհանումների ընդհանուր գումարի 50.4%-ը, իսկ դրանց արդյունավետությունը 50.4% է:**

Հետաքրքիր էր պարզել, որքանո՞վ են Աքորի գյուղի բնակիչների համար տեսանելի բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված նպատակային ծրագրերի արդյունքները:

Հարց՝ Համայնքի բարեկարգման ինչ՞ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Այս միջոցառումներն իրականացնողին դժվարացել են նշել հարցման մասնակիցների 20%-ը, իսկ 70%-ի կարծիքով դա ՏԻՄ-ն է եղել:

Ծառատնկման և ջրահեռացման ծրագրերը նկատելի են եղել հարցման մասնակիցների ընդամնը 10%-ի համար: Ուստի, դրանք դժվար թե կարող են երևացող արդյունք տված համարվել: Ոռոգման ջրագծի կառուցման և հիմնանորոգման ծրագրերը հարցման մասնակիցները կարող էին նշել ջրամատակարարման 20%-ի շրջանակում: Մնացած միջոցառումները ներառված են համայնքի պարտադիր խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում:

Գնահատելու համար բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականցված ոռոգման ջրագծի կառուցման ու հիմնանորոգման և հեղեղատարի մաքրման ու կառուցման ծրագրերի արդյունքը, մենք խնդրել էինք Աքորի գյուղի հարցման մասնակիցներին գնահատել ոռոգման և ջրահեռացման համակարգերի վիճակը:

Հարց՝ Գնահատե՛ք ոռոգման համակարգի վիճակը:



Հարց՝ Գնահատե՛ք ջրահեռացման համակարգի վիճակը:



Երկու դեպքում էլ հարցման մասնակիցների պատասխանները մտահոգիչ են: Ըստ էության այդ **համակարգերը բացակայում են, բացակայում է նաև ծարագրերի տված արդյունքը**:

Կա՞ն արդյոք Աքորի գյուղի բնակիչների համար տեսանելի իրենց տարածքին բնորոշ բնապահպանական խնդիրներ: Պատասխանն իմանալու համար հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:



Արդյո՞ք ստացված խիստ դրական արձագանքը պայմանավորված է բնության պահպանման աշխատանքների պատշաճ մակարդակով: Հարցման մասնակիցների կարծիքն իմանալու համար իրենց տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք բնության պահպանման աշխատանքները:



Պատասխանները իրարամերժ են: Գոյություն ունե՞ն արդյոք Աքորի գյուղի բնակիչներին մտահոգող վնասակար գործոններ: Պատասխանն ունենալու համար հարցման մասնակիցներին առաջարկվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:

Ըստ ստացված արդյունքի Աքորի գյուղի հարցման մասնակիցների 50%-ը գտնում է, որ իրենց բանակավայրի վրա մտահոգություն առաջացնող հիմնական գործոնը մթնոլորտի աղտոտումն է և այն վնասակար է իրենց առողջության համար, սակայն մնացած 50%-ի կարծիքով մտահոգվելու առիթ տվող մարդածին գործոններ իրենց տարածքում գոյություն չունեն:

Համադրելով Աքորի գյուղի բնակիչների մտահոգությունը իրականացված ծրագրերի ցանկի հետ, հանգում ենք հետևյալ եզրակացության՝ Աքորի գյուղի ՏԻՄ-ը նպատակային բնապահպանական

սուբվենցիաների 50%-ը ուղղել է սեփական լիազորությունների շրջանակում ներառված խնդիրների լուծմանը:

գ.Օձուն

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **10**

Բնակիչների թիվը՝ **34**

ՏԻՄ-ի աշխատակազմի անդամ՝ 1

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ծրագիրը՝

1. Փողոցների հիմնանորոգում
2. Մանկապարտեզի տարածքի կանաչապատում, խաղահրապարակի կառուցում
3. Հրապարակի կանաչապատում
4. **Անտառի վերականգնում – 2007թ., 2008թ., 2010թ./ 11,615.7 հազ.ՀՀ դրամ**
5. **Սելավատարների մաքրում - 2008թ./ 2,092.5 հազ.ՀՀ դրամ**
6. **Անտառների պահպանման աշխատանքներ - 2009թ./ 1,401.0 հազ.ՀՀ դրամ**
7. **Հեղեղատարի մաքրում - 2009թ., 2010թ. / 7,715.9 հազ.ՀՀ դրամ**
8. Կոյուղագծի կառուցում
9. Նախակրթարաններում ջեռուցման համակարգի տեղադրում
10. Խաղահրապարակի ցանկապատում
11. **Կոյուղագծի կառուցում - 2011թ., 2012թ., 2014թ./ 33,064,9 հազ.ՀՀ դրամ**
12. Փողոցների ասֆալտապատում

Ծախսված գումարը՝ 153,819.2 հազ. ՀՀ դրամ

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված նպատակային ծրագրերն են.

1. Անտառի վերականգնում
2. Սելավատարների մաքրում
3. Անտառների պահպանման աշխատանքներ
4. Հեղեղատարի մաքրում
5. Կոյուղագծի կառուցում

Դրանք բավարարում են բնապահպանական սուբվենցիաների տրամադրման համար օրենքով սահմանված պահանջները: Մնացած աշխատանքները ներառված են համայնքի պարտադիր խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում և այդ ծրագրերին ուղղված ծախսերը չեն կարող նպատակային համարվել: **Ուստի, Օձուն գյուղին հատկացված նպատակային բնապահպանական սուբվենցիաները կազմում են մասհանումների ընդհանուր գումարի 30.6%-ը, հետևաբար, բնապահապանական մասհանումների արդյունավետությունը 30.6% է:**

Հետաքրքիր էր պարզել, որքանո՞վ են Օձուն գյուղի բնակիչների համար տեսանելի բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված նպատակային ծրագրերի արդյունքները:

Հարց՝ Համայնքի բարեկարգման ինչ՞ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Հարցման մասնակիցների մեկ երրորդը դժվարացել է նշել աշխատանքներն իրականացնողին: Մնացածների կարծիքները հավասար բաշխվել են ի հոգուտ ՏԻՄ-ի հասարակական կազմակերպության, իսկ 20%-ի կարծիքով ծրագրերի իրականացման մեջ ներդրում են ունեցել նաև անհատ բարերար կամ բարեգործական կազմակերպություն:

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված նպատակային ծառատնկման և ջրահեռացման ծրագրերը նկատելի են եղել հարցման մասնակիցների համապատասխանաբար 50% և 20%-ի համար: Ուստի, եթե **ծառատնկման ծրագրի արդյունքը կարելի է բավարար համարել, ապա ջրահեռացման ծրագիրը չի կարելի համարել արդյունք տված:** Այս եզրակացությունը հաստատում են հարցման մասնակիցների կարծիքները բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականցված «Սելավատարի մաքրում», «Հեղեղատարի մաքրում» և «Կոյուղագծի կառուցում» ջրահեռացման համակարգերի վիճակի մասին:

Հարց՝ Գնահատե՛ք ջրահեռացման համակարգի վիճակը:



Հարցման մասնակիցների 50%-ի կարծիքով **ջրահեռացման համակարգը բացակայում է, բացակայում է նաև ծրագրերի տված արդյունքը**:

Գոյություն ունե՞ն արդյոք Օձուն գյուղի բնակիչների համար տեսանելի իրենց տարածքին բնորոշ բնապահպանական խնդիրներ: Պատասխանն իմանալու համար հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:



Արդյո՞ք ստացված դրական արձագանքը պայմանավորված է բնության պահպանման աշխատանքների պատշաճ մակարդակով: Հարցման մասնակիցների կարծիքն իմանալու համար իրենց տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք բնության պահպանման աշխատանքները:



Օձուն գյուղում իրականացվող բնության պահպանման աշխատանքները հարցման մասնակիցների կարծիքի համաձայն կարելի է համարել բավարար:

Բնապահպանության ոլորտում ի՞նչ խնդիրներ են մտահոգում Օձուն գյուղի բնակիչներին: Հարցման մասնակիցներին առաջարկվեց պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:



Օձուն գյուղի հարցման մասնակիցների 70%-ը գտնում է, որ իրենց բնակավայրի վրա մտահոգություն առաջացնող հիմնական գործոնը մթնոլորտի աղտոտումն է և այն վնասակար է առաջին հերթին իրենց առողջության համար: Սակայն հարցման մասնակիցների 30%-ի կարծիքով, իրենց տարածքում մտահոգվելու առիթ տվող մարդածին գործոններ գոյություն չունեն:

Օձուն գյուղի բնակիչներին մտահոգող բնապահպանական խնդիրները բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված ծրագրերի հետ համադրելու արդյունքում եզրակացնում ենք, որ Օձուն գյուղի ՏԻՄ-ը հաշվի առնելով բնակիչների կարծիքը հնարավոր է գտել նպատակային բնապահպանական սուբվենցիաների մոտ 70%-ը ուղղել սեփական լիազորությունների շրջանակում ներառված խնդիրների լուծմանը:

ք. Ալավերդի

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների թիվը՝ **50**

Բնակիչների թիվը՝ **141**

Բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականացված ծրագիրը՝

1. Դեբեդ թաղամասի ջրամատակարարման ցանցի նորոգում
2. Հեղեղատարի մաքրում և նորոգում -2006թ., 2009թ.,2017թ./12,974.9 հազ.ՀՀ դրամ
3. Ջրավազան թաղամասի հեղեղատարի մաքրում և նորոգում
4. Դեբեդ գետի պաշտպանիչ և փլված հենապատերի վերականգնում – 2006թ./6,184.4 հազ.ՀՀ դրամ
5. Կանաչապատ և անտառտարածքների վերականգնում
6. Էկոլոգիական դաստիարակություն և իրազեկում – 2008թ.,2009թ./3,048.5 հազ.ՀՀ դրամ
7. Կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի կառուցում
8. Նախագծա-նախահաշվային աշխատանքներ
9. Տեխնիկական վերահսկողության աշխատանքներ
10. Մանկական խաղահրապարակների կառուցում /նորոգում/
11. Խաղահրապարակ նորոգում և արհեստական խոտածածկույթի կառուցում
12. Փողոցների ասֆալտապատ ծածկույթի նորոգման աշխատանքներ
13. Ջրոսայգու բարեկարգում
14. Փոքր աղբարկղերի տեղադրում
15. Հայէկոմոնիտորինգի լաբորատորիայի վերանորոգում
16. Ջրցան մեքենայի ձեռքբերում
17. Աղբատար մեքենայի ձեռքբերում
18. Կոծտ կենցաղային թափոնների աղբարկղերի ձեռքբերում
19. Տարածքի բարեկարգում և կանաչապատում
20. Սանահին թաղամասի եկեղեցու հարևանությամբ հանրային զուգարանի կառուցում
21. **Ջրագծի կառուցում (Սանահին, Ակներ)-2008թ./21,813.0 հազ.ՀՀ դրամ**
22. Կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի կառուցման հետազոտական և փորձագիտական նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում

23. Ակներ գյուղական թաղամասի ջրամատակարարման ցանցի վերականգնում
24. Կանաչապատ և անտառատարածքների վերականգնում- 2006թ., 2008թ., 2009թ.,/ 12,167.9 հազ. ՀՀ դրամ
25. Վտանգավոր թափոնների /մկնդեղի/ գերեզմանոցի բնապահպանական ռիսկերի գնահատում և անվտանգությունն ապահովող միջոցառումների նախագծա- նախահաշվային փաստաթղթերի մշակում – 2015թ./ 2,300.0 հազ. ՀՀ դրամ
26. Զորավար Անդրանիկ փողոցի կոյուղագծի վերակառուցում
27. Կենցաղային աղբի համար նախատեսված աղբամանների համար կողային հատվածի պարսպապատման աշխատանքներ
28. Սանահին Սարահարթ թաղամասի 1/3 և 2/20 բազմաբնակարան շենքերի տանիքների հակակոռոզիոն ներկման աշխատանքներ
29. Կենցաղային աղբի համար նախատեսված աղբամանների ձեռքբերում
30. Հենապատերի վերանորոգում
31. Պուրակի կառուցում և ձևավորում
32. Կանաչապատ տարածքների բարեկարգում
33. Աղբարկղերի ձեռքբերում և տեղադրում
34. Հենապատերի վերանորոգում
35. Ճեմուղիների վերանորոգում
36. Բնակելի շենքերի տանիքների նորոգում
37. Աղբավայրի լոկալիզացիա – 2018/2,910.0 հազ. ՀՀ դրամ
38. Էներգախնայող լուսատուների ձեռքբերում և տեղադրում
39. Արևային կայանի ձեռբերում և տեղադրում – 2018/16,415.2 հազ. ՀՀ դրամ
40. Հեղեղատարների վերանորոգում – 2018/650.0 հազ. ՀՀ դրամ
41. Նախագծա-հաշվային աշխատանքներ
42. Հեղեղատարների մաքրում – 2018/2,718.9 հազ. ՀՀ դրամ
43. Աղբահանության կազմակերպում

Ծախսված գումարը՝ 615,539.4 հազ. ՀՀ դրամ

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված նպատակային ծրագրերն են.

1.Հեղեղատարի մաքրում և նորոգում
2.Դեբեդ գետի պաշտպանիչ և փլված հենապատերի վերանորոգում
3. Կանաչապատ և անտառային տարածքների վերականգնում
4. Էկոլոգիական դաստիարակություն և իրազեկում
5. Ջրագծի կառուցում (Սանահին, Ակներ)
6. Վտանգավոր թափոնների գերեզմանոցի բնապահպանական ռիսկերի գնահատում և անվտանգությունն ապահովող միջոցառումների նախագծա- նախահաշվային փաստաթղթերի մշակում
7. Աղբավայրի լոկալիզացիա
8. Արևային կայանի ձեռբերում և տեղադրում
9. Հեղեղատարների վերանորոգում

Այս ծրագրերը բավարարում են բնապահպանական սուբվենցիաների տրամադրման համար օրենքով սահմանված պահանջները: Բնապահպանական սուբվենցիաների հշվին իրականացված մնացած աշխատանքները ներառված են համայնքի պարտադիր խնդիրների շարքում և ՏԻՄ-ի սեփական լիազորությունների շրջանակում և դրանց ուղղված ծախսերը չեն կարող նպատակային համարվել: **Հետևաբար, Ալավերդի քաղաքին հատկացված նպատակային բնապահպանական սուբվենցիաները կազմում են մասհանումների ընդհանուր գումարի միայն 13.2%-ը, ուստի և բնապահպանական սուբվենցիաների արդյունավետությունը 13.2% է:**

Հետաքրքիր էր պարզել, տեսանելի՞ են արդյոք **Ալավերդի քաղաքի** բնակիչների համար բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված նպատակային ծրագրերի արդյունքները:

Հարց՝ Համայնքի բարեկարգման ինչ՞ ծրագրեր են իրականացվել 2004 թվականից մինչև այժմ:



Հարցման մասնակիցների մոտ 40%-ի կարծիքով քաղաքում 2004թ.-ից ի վեր բարեկարգման որևէ ծրագիր չի իրականցվել: ՏԻՄ-ը, որպես ծրագրեր իրականցնող, նշել են հարցման մասնակիցների 32%-ը, մեկ մասնակից նշել է հասարակական կազմակերպություն, երեքը՝ անհատ բարերար, բարեգործական կազմակերպություն, մնացածները դժվարացել են, կամ հրաժարվել են պատասխանել:

Բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված նպատակային ծրագրերը նկատելի են եղել հարցման մասնակիցների առավելագույնը 14%-ի համար, ուստի դրանք **դժվար է համարել բավարար արդյունք տված:** Այս եզրակացությունը հաստատում են հարցման մասնակիցների կարծիքները բնապահպանական սուբվենցիայի հաշվին իրականցված ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վիճակի մասին:

Հարց՝ Գնահատե՛ք ջրամատակարարման համակարգի վիճակը:



Հարցման մասնակիցների 70%-ը բավարար կամ լավ են գնահատում ջրամատակարարման համակարգի վիճակը: Նման գնահատականի են արժանացել նաև մատակարարվող ջրի որակն ու քանակը: Ուստի բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված **ջրագծի կառուցման նպատակային ծրագրի արդյունքը ևս կարելի է բավարար ճանաչել:**

Հարց՝ Գնահատե՛ք ջրահեռացման համակարգի վիճակը:



Ջրահեռացման համակարգի վիճակը, հարցման մասնակիցների տված գնահատականից ելնելով, դժվար է բավարար համարել: Ըստ հարցման մասնակիցների 42%-ի **ջրահեռացման համակարգը բացակայում է, հետևաբար՝ բացակայում է նաև ծրագրի տված արդյունքը**:

Գոյություն ունե՞ն արդյոք Ալավերդի քաղաքի բնակիչների համար իրենց տարածքին բնորոշ տեսանելի բնապահպանական խնդիրներ: Պատասխանն իմանալու համար հարցման մասնակիցներին տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք ձեր տարածքում բնական միջավայրի վիճակը:



Ստացված գնահատականը բավական գոհացուցիչ է: Արդյո՞ք այն պայմանավորված է բնության պահպանման աշխատանքների պատշաճ մակարդակով: Հարցման մասնակիցների կարծիքն իմանալու համար իրենց տրվեց հետևյալ հարցը.

Հարց՝ Գնահատե՛ք բնության պահպանման աշխատանքները:



Ալավերդի քաղաքում իրականացվող բնության պահպանման աշխատանքները հարցման մասնակիցների կարծիքով կարելի է համարել խիստ անբավարար:

Պարզելու համար, թե բնապահպանության ոլորտում ի՞նչ խնդիրներ են մտահոգում Ալավերդի քաղաքի բնակիչներին, հարցման մասնակիցներին առաջարկվեց պատասխանել հետևյալ հարցին.

Հարց՝ Ի՞նչ վնասակար մարդածին գործոններ են ազդում ձեր բնակավայրի վրա:



Զարմանալի է, բայց Ալավերդի քաղաքի հարցման մասնակիցների մոտ 20%-ին իրենց տարածքում մտահոգվելու առիթ տվող մարդածին գործոններ գոյություն չունեն: Մինչդեռ 43%-ին մտահոգում է մթնոլորտի աղտոտման, 13%-ին՝ հանքերի շահագործման հետևանքով առաջացած վնասը, որը հարցման մասնակիցների 72%-ի կարծիքով վատ է անդրադառնում իրենց առողջության վրա:

Ալավերդի քաղաքի բնակիչներին մտահոգող մարդածին վնասակար գործոնների մասին կարծիքը բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրականացված ծրագրերի հետ համադրելու արդյունքում եզրակացնում ենք, որ ՏԻՄ-ը՝ աչքաթող անելով բնակչությանը մտահոգող բազմաթիվ

բնապահպանական բնույթի խնդիրները բնապահպանական մասհանումների 90%-ից ավելին ուղղել է սեփական լիազորությունների շրջանակում ներառված խնդիրների լուծմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարցման ընդհանրացված արդյունքների հիման վրա ձևավորված եզրակացությունները՝

- ✓ Ազդակիր համայնքներին տրամադրված նպատակային մասհանումների հաշվին իրականացված ծրագրերի 30%-ն է բավարարում օրենքով սահմանված պահանջները: Արդյունքում տեղի է ունենում բնապահպանական մասհանումների համար տրամադրվող առանց այդ էլ սուղ միջոցների փոշիացում:
- ✓ Նպատակային մասհանումների արդյունավետությունը կազմում է 29.7%: Մասհանումների 70%-ը գերազանցող մասը ուղղվում է ազդակիր համայնքների ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունների շրջանակում գտնվող խնդիրների լուծմանը:
- ✓ Ազդակիր համայնքների բնակիչները որպես կանոն տեղյակ չեն իրենց համայնքում իրականացված բնապահպանական ծրագրերից: Արդյունքում խթանվում է տեղական իշխանությունների կամայական և անվերահսկելի կառավարման ոճը:
- ✓ Ազդակիր համայնքների բնակիչների համար իրականացված ծրագրերի արդյունքը հաճախ տեսանելի չէ: Դա մեծամասամբ պայմանավորված է բնապահպանական մասհանումների իրացման նկատմամբ պետական վերահսկողության ի սպառ բացակայությամբ
- ✓ Ազդակիր համայնքների բնակիչները որպես կանոն օտարված են բնապահպանական ծրագրերի մշակման և իրականացման գործընթացներից: Արդյունքում՝ ծրագրերը մշակելիս, տեղական իշխանությունները հաշվի չեն առնում բնակիչների իրական բնապահպանական կարիքները ու պահանջները և հաշվետու չեն իրենց:
- ✓ Բնապահպանական սուբվենցիաների հաշվին իրկանացված ծրագրերը համահունչ չեն տեղի բնակչությանը մտահոգող բնապահպանական խնդիրների, կարիքների և պահանջների հետ: Արդյունքում տեղական մակարդակում խախտված է ժողովրդավարության հիմքում ընկած մասնակցային կառավարման սկզբունքը:

Հավելված 3-ում բերված աղյուսակում ամփոփված են 2004-2018 թթ. յուրաքանչյուր ազդակիր համայնքին կատարված ընդհանուր և նպատակային բնապահպանական մասհանումների գումարները և դրանց համադրման միջոցով հաշվարկված տոկոսներով արտահայտված մասհանումների արդյունավետությունը:

Վերը թվարկած հիմնահարցերի լուծմանն ուղղված առաջարկություններ.

1. Բնապահպանական մասհանումների հասցեականությունը ապահովելու համար մշակել և հրապարակել Հայաստանի ազդակիր համայնքների բնապահպանական խնդիրների քարտեզը:
2. Բնապահպանական մասհանումների փոշիացումը կանխելու նպատակով դրանք ուղղել բացառապես նպատակային բնույթի ծրագրերի իրականացմանը:
3. Շահագրգիռ հանրության համար հասանելի դարձնել յուրաքանչյուր տարվա համար հաստատված համայնքների ցանկը, բնապահպանական հարկից նրանց բյուջեներ մասհանվող գումարների չափը և դրանց հաշվին իրականցվող ծրագրերի մասին տեղեկատվությունը:
4. Հավակնոտ և ծավալուն նպատակային բնապահպանական ծրագրերի իրականացման համար նախատեսել մասհանումների կուտակման մեխանիզմ:
5. Բնապահպանական մասհանումների ծավալի և դրանց տրամադրման մեխանիզմի նկատմամբ պետական և հանրային վերահսկողությունը ապահովելու նպատակով հիմնել հատուկ կառույց՝ «Կանաչ» հիմնադրամի տեսքով: Յուրաքանչյուր տարվա համար բնապահպանական հարկից մասհանվող գումարները փոխանցել Հիմնադրամի բյուջե, որը կիրականացնի համայնքային նպատակային ծրագրերի գնահատումը ըստ դրանց կարևորության և առաջնահերթության և պատասխանատու կլինի ծրագրերի իրականացման ընթացքի մշտադիտարկման և արդյունքների գնահատման համար:

   Բնապահպանական հարկից մասհանվող միջոցներից բացի Հիմնադրամի բյուջեն կարող է համալրվել նաև այլ աղբյուրներից: